

Համլետ Կ. Դավթյան

ՎԻՐՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՈՒՄԸ

Հայկական դարձերես*

Մուտք

Հայագիտության մեջ իր հաստատուն տեղն ունի այն պատմական ճշմարտությունը, որ քրիստոնեությունը Վիրք մուտք է գործել Մեծ Հայքի ճանապարհով: Հայ և Վրաց սկզբնական եկեղեցիների ծագումնաբանական նույնությունը մինչև XX դարի 20-ականներն անվերապահորեն ընդունված էր նաև վրաց գիտնականների կողմից:

Փաստն ինքնին բնական էր համարվում, քանզի ընդհանուր ընկալումը կար, որ անցյալում դրկից ու դրացի այս ժողովուրդների մոտ նաև շատ բան պիտի ընդհանուր լիներ: Առաջին հերթին դա պիտի վերաբերեր կրոնին ու դավանանքին, եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ, ի վերջո, կրոնը մարդկային կյանքը, ըստ այդմ և ժողովուրդների համակեցությունը կարգավորող օրենք է: Անտարակույս, ընդհանրություն պիտի ունենար նաև եկեղեցին:

1. Մուրք Գրիգոր և Մուրք Նունե

Ուշագրավ են խնդրի վերաբերյալ ժամանակին արտահայտված գիտական գնահատականները:

Այսպես՝ ականավոր կովկասագետ Նիկողայոս Մառը (1864–1934) գրում էր. «Գրիգորի վրացական պաշտամունքի մեջ մենք ունենք հետքը

*Հոդվածն ընդունվել է տպագրության 11.05.2013:

1 Փաստը, որ Մեծ Հայքը, Վիրքը և Աղվանքը միասին են ընդունել քրիստոնեությունը որպես պետական կրոն, հաստատում է ոչ միայն Սր. Գրիգորի վարքի արաբական տարբերակը, որը XX դ. սկզբին հայտնաբերել է Ն. Մառը, այլև ավելի ուշ գտնված հունարեն ձեռագիրը: Տես Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմ. հունարեն բնագրից Հրաչ Բարթիկյանի, առաջաբանը՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, «Լեջմիածին» ամսագիր, 1966, N է, Ը, Թ-Ց: Այստեղ անգնահատելի տեղեկություններ կան դեպի արևելք քրիստոնեական աշխարհի սահմանների ընդլայնման մասին: Մա չափազանց կարևոր հանգամանք է, քանզի հնարավորություն է տալիս ձիշտ պատկերացում կազմելու դարաշրջանի միջեկեղեցական հարաբերությունների վերաբերյալ: Մակայն մեզ հետաքրքրող հարցից կարող ենք զգալիորեն շեղվել, եթե ծանրանանք Մեծ Հայքի քրիստոնեացման մանրամասների վրա:

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԻՐՔ համահայկական հանդես

առաջին հայ-վրացական այն եկեղեցու (ընդգծումը մերն է – Հ.Դ.), որը հաստատված էր Տիեզերական եկեղեցու անդամ ավելի հին-սիրիացիների ձեռքով»²: Նույն տեսակետին հանդիպում ենք նաև Մառի մեկ այլ աշխատության մեջ. «Քրիստոսի վարդապետությունը Վրաստան է թափանցել երկու կողմից, հարավ-արևելքից՝ Սիրիայից, Հայաստանի վրայով և հարավ-արևմուտքից՝ Հունաստանից, Կապադովկիայի վրայով: Քրիստոնեական համայնքները, որոնք մինչև IV դարը հիմնադրվել էին Հայաստանում, այնուհետև հայերի կողմից Վրաստանում, V դարում ձևավորեցին ինքնուրույն եկեղեցի սեփական դպրությամբ, ստեղծված տեղական լեզուներով՝ հայերեն և վրացերեն»³:

Վրաց ականավոր գրականագետ, Վրացական ԽՍՀ ԳԱ անդամ **Կորնելի Կեկելիձեն** (1879–1962) նույնպես նույն համոզումն ունեւր. «Մեր եկեղեցու իրավասությունը սահմանափակվում էր այն տարածքով, որ Քարթլի էր կոչվում, ուստի եկեղեցին ևս իրավամբ հայտնի էր որպէս Քարթլիի եկեղեցի: [...] Մենք գիտենք՝ ասորա-պաղեստինյան արևելյան քրիստոնեությունը Քարթլի է ներթափանցել և տարածվել հայ քարոզիչների մասնակցությամբ (միջոցով): Այստեղ ձևավորվեց այնպիսի բնույթի եկեղեցի, որպիսին և կար դրացի Հայաստանում: Իր աստիճանակարգով **սկզբնապես այս եկեղեցին կապված էր հայկական եկեղեցու հետ և հանդիսանում էր նրա բաղկացուցիչ մասերից մեկը** (ընդգծումը մերն է – Հ.Դ.): Նրանում իշխում էին միևնույն եկեղեցական ծեսերը, սովորույթներն ու ավանդույթները: Վրաց այբուբենն իսկ, ինչպէս տեսանք, ձևավորվել և ավարտին է հասել հայ գիտնականների մասնակցությամբ, ուրեմն գրականության, այս բառի բուն իմաստով, հիմքը մեզանում դրվել է հայերի դրացությամբ և ազդեցությամբ»⁴:

Վրաց մեկ այլ ականավոր գիտնական, Թբիլիսիի համալսարանի հիմնադիր **Իվանե Զավախիշվիլին** (1876–1940), դեռևս նախահեղափոխական Ռուսաստանում հրապարակված իր աշխատության մեջ քննարկման նյութ անգամ չի դարձրել այն փաստը, որ Քարթլիում քրիստոնեությունը Սբ. Գրիգորն է տարածել⁵:

Հայ ականավոր պատմաբան **Լեոն** (1860–1932) իր հերթին հաստատել է այդ իրողությունը. «Մի ընդհանուր պաշտամունք, կրոնական մի աշխարհայացք-այս հզոր կապերն էին սերտորեն միացնում նրանց: [...] Համաձայնությունը երկու եկեղեցիների միջև կատարյալ էր»⁶:

Իսկ հայ եկեղեցու խոշորագույն պատմաբան **Մ. Օրմանյանը** (1841–1918) համաձայնել է այդ կարծիքին. «Անդստին Լուսաւորչին օրէն ներքին միաւորութիւն մը հաստատուած էր Հայոց և Վրաց եկեղեցիներուն մէջ»⁷:

Սրանք հանրահայտ գրավոր փաստերի ու տեղեկությունների վրա հիմնված գիտական եզրակացություններ էին, որոնք մինչև

2 **Март Н.**, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия), СПб, 1905, с. 91–92.

3 **Март Н.**, История Грузии (культурно-исторический набросок), СПб, 1906, с. 19–20.

4 Մեջբերումն ըստ՝ **Մարտիրոսյան Ա.**, Մաշտոց, Եր., 1982, էջ 346–347:

5 **Стів Джавахов И.**, История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века, СПб, 1908, с. 520–523.

6 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1967, էջ 142, 227:

7 **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. Ա., Էջմիածին, 2001, էջ 683:

1930-ական թվականները ընդունում էին նաև վրացի նշանավոր մտավորականներն ու պատմաբանները: Մակայն այդ ամենն այսօր, չգիտես ինչու, կասկածի տակ է առնվում: Մոռացության է տրվում անգամ Գրիգոր Լուսավորչի անունը, չնայած որ տեղեկատվությունն այն մասին, թե Քարթլին «Հայքի հետ միաժամանակ, նոյն ձեռքով ու նոյն աղբիւրից պիտի ընկալէր նոր ուսմունքը, ուստի Գրիգոր Պարթևը պիտի ծանաչուեր արևելավրաց թագաւորութեան լուսաւորիչ»⁸, պարունակվում է ոչ միայն հայկական, այլև վրացական աղբյուրներում: Այսպես՝ XI դ. մատենագիր Արսեն Սափարեցին (Սափարեղի) վկայում է. «Վրացիք ասում էին, որ «սուրբ Գրիգորը Հունաստանից բերել տվեց մեզ հավատքը»⁹:

Ինչ վերաբերում է Ագաթանգեղոսի արաբական խմբագրությանը, ապա այն լրացնում է հայկական աղբյուրներին. «Ս. Գրիգորը եպիսկոպոսներ է ուղարկում ոչ միայն Հայաստանի գավառները, այլ նաև Վրաստան, դուրզուկների երկիրը և ալանների մոտ: Վրաստան է ուղարկվում Իբիր-բ-գ-Խուան, Ափխազիա՝ Սոփրոնիոսը և Ալանք՝ Թոման»¹⁰:

«Գրիգորի մասին, – գրում է Մառը, – վրացական նյութերը բավականին շատ են. գոյություն ունեն Վարքի առանձին տարբերակներ, կա գեղեցիկ օրհներգ, նրա հիշատակն ընդհանրապես վրացական հին եկեղեցու կողմից մեծ հարգանքի էր արժանանում ընդհուպ X դարը: Վրաց կաթողիկոս Արսենը, X դարի մատենագիրը, հանդիմանում է հայերին սբ. Գրիգորի պատգամներից հօգուտ սիրիացիների հրաժարվելու համար, որը, ըստ Արսենի, հերետիկոսական ուսմունք է, և դեռ Կյուրիոն կաթողիկոսի օրոք էլ համահունչ չէր այն «հավատքին, որը սբ. Գրիգորը բերել է մեզ Հունաստանից»¹¹:

Գրիգոր Պարթևին նվիրված X դարի վրացական մի օրհներգում այսպիսի տողեր կան. «Ով Գրիգոր, դու, որ Հայաստանի աստղն ես, հիշիր քեզ հետ քո հոտին – փրկչի առաջ. շնորհիր մեզ ողորմություն և ծավալիր աշխարհում խաղաղություն (ընդգծումը մերն է–Լ.Դ.)»¹²:

Ցավոք, նորություն չէ նաև, որ երկու եկեղեցիների բաժանվելուց հետո անհասկանալի ցանկություն առաջացավ վերանայել Վիրքում քրիստոնեության տարածման պատմությունը: Այս առումով ուշագրավ է IX դարին վերագրվող «Քարթլի դարձը» («Մոքցևայ Քարթլիսայ») երկի վերաբերյալ Գեորգի Մելիքիշվիլիի դիտողությունը. «Հետաքրքրական է, որ դեռևս VII դ. սկզբին Քարթլի կաթողիկոս Կյուրիոնը Գրիգոր Պարթևին համարում է ինչպես հայերի, այնպես էլ վրացիների լուսավորիչը, այն դեպքում, երբ «Մոքցևայ Քարթլիսայ»-ում Քարթլի քրիստոնեական դարձի կապակցությամբ Գրիգորի մասին արդեն ոչինչ չի ասվում»¹³:

8 Մուրադևան Պ., Վրաց եկեղեցին (պատմամշակութային ակնարկ), «Հանդէս Ամսօրեայ», Վենետիկ, 2000, N 1-12, էջ 288:

9 Արսեն Սափարեցի, Վրաց (Քարթլի) և Հայոց (Մովսիթի) բաժանման մասին, տես «Մելիքութեան Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Եր., հ. Ա., 1934, էջ 37:

10 Արսեն Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 364: Ի դեպ, պետք չէ զարմանալ, որ եպիսկոպոսներից ոչ մեկի անունը հայկական չէ. Գրիգոր Լուսավորչի օրոք հենց Հայաստանում քարոզիչներն ու հոգևորական աստիճանավորները հիմնականում հույներ և ասորիներ էին:

11 Март Н., Крещение..., с. 135.

12 Մելիքութեան Լ., նշվ. աշխ., հ. Ա., էջ 95:

13 Меликишвили Г., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 25.

Այսօրինակ մոռացումները կամ սրբագրումները հետագայում դառնում են ավանդույթ: Նույն «Դարձի» անանուն հեղինակը երբ վկայում է, որ Նունեն Գայանյան կույսերի հետ փախչում է Հունաստանից, Քարթլիի մասին գիտենալով միայն, որ այդ «հյուսիսային երկիրը գտնվում է Հայոց լեռնաստանում. այն հեթանոս երկիր է, հունաց և խուժկաց պետությանն ստորադրյալ»¹⁴, ապա արդեն XI դ. հեղինակ Լեոնտի Միովելին իր հանրահայտ երկում գրում է, թե Նունեն գիտեր, որ «դեպի արևելք գտնվում է քաղաք՝ անունով Սցխեթ (Սցխեթա), և երկիրն Վրաց (Քարթլիի) և Հայոց (Մովսիթի) լեռնաստանում»¹⁵: Ինչպես տեսնում ենք, ավելանում է **Քարթլի** երկրանունը: Բայց իրականում Միովելու երկում արդեն մի շատ ավելի կարևոր տեղաշարժ էր կատարվել. Քարթլիի առաքելուհի Նունեն (մոցիբուլի քարթուելթա Նինո) հյուսիսային այդ երկրամասում գործում է ոչ թե Գրիգոր Պարթևի ցուցումներով (ըստ Խորենացու), այլ՝ Հռոմի պատրիարքի. «Այդ ժամանակ թուղթ հասավ Հռոմից՝ սուրբ պատրիարքից, Նունեի (Նինոյի) և թագավորի և Վրաց (Քարթլիի) ամբողջ ժողովրդի [հասցեով]. եկավ և մի սարկավագ [ծագումով] բրանջ (ֆրանկ, իմա՝ բյուզանդացի - Հ.Գ.) ... որը նամակ ուներ հետն բրանջանց թագավորից Նունեի (Նինոյի) հասցեին»¹⁶:

Ժամանակին Գրիգոր Լուսավորչի կերպարի ու գործունեության վերագնահատման ընթացքին ամենայն ուշադրությամբ հետևել է **Ա. Մարտիրոսյանը**: Այսպես, նա գրում է, որ 1905 թ. հրատարակած իր ուսումնասիրության մեջ «Մառը գտնում է, որ Նունեն Իբերիայի առաքելուհին է, իսկ Քարթլին Քրիստոսի խաչը ստացավ Լուսավորչի ձեռքով: [...] Ավելի ուշ (1928 թ.- Հ.Գ.) **Ս. Կակաբաձեն** գտնում է, որ Գրիգորը եղել է առաքելական շարժման գլուխը, իսկ Նունեն՝ նրա քարոզիչներից մեկը: **Գ. Փերաձեն** գտնում է (1932 թ.- Հ.Գ.), որ Գրիգոր Լուսավորչի մասին տեղեկությունները պատմական են և վերաբերում են վաղ շրջանին, իսկ Նունեի գրույցը վրաց իրականության մեջ ծնվել է ի հակակշիռ Լուսավորչի. «Այն վայրկյանից, որ Նունեն Վրաց առաքելուհի է ներկայանում, վրաց տարեգրությունների և հայրագրության էջերից անհետանում է Սր. Գրիգորի անունը»:

Ի. Զավախիշվիլին, ընդհակառակը, ավելի վստահություն է տածում Նունեի վարքին, իսկ Գրիգոր Լուսավորչի մասին ավանդությունը դիտում է որպես պատմական հորինվածք: Նա որոշում է նույնիսկ դրա ծագման և տարածման ժամանակը՝ VI-VII դդ.: Զավախիշվիլու այս կարծիքը ընդհանուր ճանաչում ստացավ: Այն ընդունված է «Ակնարկներ վրաց պատմության» ակադեմիական հրատարակության կողմից (1973 թ.- Հ.Գ.), իբրև ճիշտ տարբերակ»¹⁷:

Մեր նպատակը չէ քննել այն հարցը, թե ով է առաջինը քարոզել Վիրքում՝ Գրիգորը, թե՞ Գրիգորի հրահանգով՝ Նունեն: Պարզապես փաստ է Գրիգորին հետ մղելը և Նունեին առաջ բերելը: Ըստ այդմ, պատմական հիշողությունը վերականգնելու նպատակով մեջբերում կատարենք Գրի-

14 Մեջբերումը ըստ՝ **Մելիքսեթ-Քեկ Լ.**, նշվ. աշխ., հ. Ա., էջ 22:

15 Նույն տեղում, էջ 169:

16 Նույն տեղում, էջ 173:

17 **Մարտիրոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 287-288:

գոր Պարթևի գործը ամփոփող՝ գիտությանը հայտնի միակ աղբյուրից՝ Ագաթանգեղոսի Պատմությունից: Նրանում գրված է. «Այսպես ամբողջ Հայոց երկրում, ծայրից ծայր, [Գրիգորը.– Հ.Դ.] ջանաց, սփռեց, տարածեց քարոզության և ավետարանության գործը՝ սատաղացիների քաղաքից մինչև Խաղտյաց երկիրը, Կղարջքի մոտ, ապա ընդհուպ մինչև Մասքութների սահմանները, մինչև Ալանաց դռները, Կասպից սահմանները և Հայոց թագավորության Փայտակարան քաղաքը: Ամիդ քաղաքից մինչև Մծբին քաղաքը, քերելով Ատրիքի սահմանները, Նոր Շիրական երկիրը, Կորդուք գավառը մինչև Մարաց ամուր աշխարհը, մինչև Մահքը–Տան իշխանի երկիրը և Ատրպատական՝ սփռում, տարածում էր իր ավետարանական քարոզը»¹⁸: Նկատենք, որ հայերեն գրված այս մատյանը թվագրվում է V դարով, իսկ նրա սկզբնագիրը՝ IV դարով¹⁹, այն դեպքում, երբ վրացերեն ամենափին գրավոր հուշարձանը IX դ. անսնուն հեղինակի «Քարթլի դարձը» երկն է²⁰, որի նախօրինակը որոշ վրացի ուսումնասիրողներ նույնպես փորձում են հասցնել IV դարի կեսեր²¹: Մա հետաքրքիր գուգորդումներ է առաջացնում: Բանն այն է, որ IV դարում ստեղծվածը միայն և միայն Ագաթանգեղոսի հունարեն սկզբնօրինակն է, որը կոչվել է «Գրիգորիսի գիրք», որտեղ իսկապես հիշատակվում է Նունեն, և որից է օգտվել Խորենացին: Այսինքն՝ վրացական պատումի հիմքը կրկին հայկական է: Մա նշանակում է, որ քայլ անգամ շեղվելը այդ աղբյուրից՝ շեղում է ճշմարտությունից:

Իսկությունը վերականգնելու համար այսօր կարող ենք ընդամենը մեկ միջոց գործադրել՝ կարդալ Խորենացի և վստահել Խորենացուն: Վստահել այն պարզ պատճառով, որ Խորենացին օգտվել է նշյալ ամենաառաջին սկզբնաղբյուրից, հետևաբար նրա պատումը մինչև անգամ հայերեն Ագաթանգեղոսի բերածից ավելի հին ու նախնական է: Ահա թե ինչ է մեզ ավանդել Խորենացին.

«ԵՐԱՆԵԼԻ ՆՈՒՆԵԻ ՄԱՄԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԿ
ՎՐԱՑԻՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ

Մի կին, Նունե անունով, սուրբ Հռիփսիմյանների ցրված ընկերներից, փախչում հասնում է Վրաց աշխարհը, Մծխիթա, որ նրանց նախագահ քաղաքն է: Իխտ ձգնություններով նա բժշկության շնորհք ստացավ, որով շատ ախտավորներ բժշկեց, մինչև իսկ Միհրանի, Վրաց առաջնորդի կնոջը: Այս առիթով Միհրանը նրան հարցրեց, թե ինչ գորությամբ այդ սքանչելիքները գործում ես և նրանից լսեց Քրիստոսի ավետարանի քարոզությունը, և լսածին ախորժելով, գովասանությամբ պատմեց իր նախարարներին: Շուտով նրան լուր հասավ այն սքանչելիքների մասին, որ Հայաստանում կատարվեցին թագավորի և նախարարների վրա, ինչպես

18 Ագաթանգեղոս, Հայոց պատմություն (գրաբար, աշխարհաբար), Եր., 1983, էջ 469:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 504:

20 Տե՛ս Մելիքսեթ-Քեյլ Լ., նշվ. աշխ., հ. Ա., էջ 18–23:

21 Տե՛ս Ստարիձե Լ., Проповедь св. Нины в IV в., Крещение Грузии, объявление христианства государственной религией в Картали. См. статья “Грузинская Православная Церковь” из XIII тома “Православной энциклопедии”, Москва, 2007.

և երանելի Նունեի ընկերների մասին: Այս բաների վրա հիացած՝ նա պատմեց երանելի Նունեին, որից և ավելի ստույգ կերպով և մանրամասն տեղեկացավ բոլոր բաներին:

Այդ օրերում դեպք եղավ, որ Միհրանը որսի գնաց և մուրովեց լեռների դժվարակոխ տեղերում, օդի, բայց ոչ աչքերի խավարելուց, ինչպես որ գրված է. «խոսքով մեզ է բերում» (Հոր., ԼԸ, 34.- ծնթ.), կամ «ցերեկը մթնեցնում գիշեր է դարձնում» (Ամովս., Ե, 8.- ծնթ.): Այսպիսի մի խավար պատեց Միհրանին, որ առիթ դարձավ նրա մշտնջենավոր լուսավորվելուն: Որովհետև նա զարհուրեց, հիշելով Տրդատի մասին լսածը, թե երբ ձանապարհ ընկավ, կամենալով որսի գնալ՝ աստծուց հարվածներ հասան նրան. նա կարծեց, թե իրեն էլ այդպիսի բան պիտի պատահի: Մեծ երկյուղից պաշարված՝ նա խնդրեց աղոթքով, որ օդը լուսավորվի և ինքը խաղաղ (տուն) վերադառնա, խոստանալով պաշտել Նունեի աստծուն: Խնդրածը գտնելով՝ ասածը կատարեց:

Իսկ երանելի Նունեն հավատարիմ մարդիկ խնդրելով՝ ուղարկեց Սր. Գրիգորի մոտ, թե ինչ կիրամայե այնուհետև անել, որովհետև վրացիները հոժարությամբ ընդունեցին ավետարանի քարոզությունը: Նա հրաման ստացավ՝ կուռքերը կործանել, ինչպես արել էր և ինքը, և կանգնեցնել պատվական խաչի նշանը, մինչև որ աստված հովիվ տա նրանց առաջնորդելու: (Նունեն) իսկույն կործանեց ամպրոպային Արամագոյի արձանը, որ քաղաքից հեռու էր դրված, և մեծ գետն անցնում էր երկուսի միջով: (Այդ արձանին) սովոր էին երկրպագել առավոտներն յուրաքանչյուրն իր տան կտուրից, որովհետև երևում էր նրանց դիմացը, իսկ ով որ կամենար զոհել, անցնում էր գետը և զոհում էր մեհյանի առաջ:

Նրա վրա հարձակվեցին քաղաքի նախարարները, թե ում պիտի երկրպագենք կուռքերի փոխանակ. (Նունեն) ասաց, թե Քրիստոսի խաչի նշանին: (Խաչ) շինեցին, կանգնեցրին վայելուչ բլուրի վրա, քաղաքի արևելյան կողմը, որ նույնպես բաժանված էր փոքրագույն գետով: Առավոտը բոլոր բազմությունը նրան երկրպագեց, դարձյալ ամեն մեկն իր տան տանիքից: Բայց երբ բլուրը բարձրացան ու տեսան, որ մի տաշած փայտ է, ոչ ձարտար ձեռքի գործ, շատ շատերն արհամարհեցին ասելով, թե այդպիսի փայտով նրանց անտառը լիքն է, և թողին հեռացան: Բայց բարերարն աստված նրանց գայթակղվելը տեսնելով, երկնքից ամպի պուն իջեցրեց, լեռը լցվեց անուշահոտ բուրմունքով, և լսելի եղավ բազմաթիվ սաղմոսերգուների քաղցր ձայն, և լույս ծագեց խաչի նման, փայտյա խաչի ձևով ու չափերով, որ կանգնեց նրա վրա՝ տասներկու աստղով: Այս բոլորը հավատացին ու (այդ խաչին) երկրպագեցին, և այնուհետև նրանից բժշկական գորություններ էին կատարվում:

Իսկ երանելի Նունեն այնտեղից գնաց, որ Վրաստանի մյուս գավառներին էլ քարոզի իր անապական լեզվով, շատ հասարակ կերպով շրջելով, առանց որևէ ավելորդի, աշխարհից և աշխարհային ամեն բանից հրաժարված, ավելի ճիշտ խոսելով՝ խաչվելով, կյանքը դարձնելով մահվան կրթության միջոց, աստծու խոսքին (բանին) խոսքով վկա դառնալով և իր հոժարությամբ պսակվելով՝ ինչպես արյունով: Համարձակվում եմ ասել, որ նա առաքելուհի դարձած քարոզեց Կղարջքից սկսած, Ալանաց և

Կասբից դռների մոտով մինչև Մասքութների սահմանները, ինչպես քեզ պատմում է Ագաթանգեղոսը»²²:

Այսպիսով, ինչ է հայտնում մեզ Խորենացին. ա) Վիրքում քարոզել է Նունեն, բ) Նունեն Մեծ Հայքից է գնացել Վիրք և գ) Նունեն Մեծ Հայքից Վիրք է գնացել Գրիգորի հանձնարարությամբ: Ինչպես տեսնում ենք, Խորենացին էլ չի ասում, թե Գրիգորն անձամբ է ավետարանել Վիրքից մինչև Կազբբ: Սակայն դա բնավ չի հակասում այն իրողությանը, որ Գրիգորը պաշտամունքի է արժանացել համայն Կովկասում իր ծավալած գործունեության համար: Գրիգորը Մեծ Հայքում և հյուսիսային մասցած երկրներում քրիստոնեություն տարածող միսիայի գլխավորն էր, և գործի հաջողության համար է նա դասվել Ընդհանրական եկեղեցու սրբերի շարքը²³:

Նույն բանն են պնդել նաև **Ջանաշվիլին**²⁴, ինչպես և վերը նշված **Կալարաձեն** և **Փերաձեն**, սակայն վրաց պատմաբանների նոր սերունդը փորձում է նոր էջից սկսել պատմության սեփական մասնաբաժնի վերագրանցումը: **Նրանց ջանքերով վերակենդանացել են XI դարից հետո կատարված բոլոր այն խմբագրումները, որտեղ արդեն Գրիգորի անունը չի հիշատակվում:** Ըստ այդմ՝ Նունեն Մեծ Հայքից չի անցնում Վիրք և, ընդհանրապես, առաքելուիին ոչ թե Նունեն է, այլ Նինոն՝ բոլորովին ուրիշ կենսագրությամբ մի գերուհի: Այս միտումը նույնիսկ անհեթեթության է հանգեցնում: Օրինակ՝ ըստ Վրաց եկեղեցու հին շրջանի պատմաբան, կաթոլիկ միաբան **Միխայիլ Թարխնիշվիլու**՝ վրացիները երկար ժամանակ մոռացության էին մատնել իրենց լուսավորիչ Սբ. Նինոյին, փոխարենը որպես այդպիսին մեծարում էին Գրիգոր Պարթևին, որովհետև **Նինոն կին էր և աղքատ եկվոր (գաղթական):** Այս տեսակետը վրացի ուրիշ ուսումնասիրողներ էլ են հավանական համարում, որովհետև, նրանց կարծիքով, վրացական ազգային հատկանիշներից մեկը օտարասիրությունն է, տվյալ դեպքում՝ տևական ժամանակ հայերի հանդեպ պռոթակացող ջերմ համակրանքի ալիքը²⁵:

Աճպարարության երկրորդ օրինակը հետևյալն է. «**Հավանաբար** հին վրացական քրիստոնեական ավանդույթը վրացիների լուսավորչուհի էր համարում սուրբ Նինոյին, ինչը **հաստատվում է** հունալատինական և հայկական գրավոր աղբյուրներով: Սակայն այն ժամանակ, երբ Իրանը, չնայած Անդրկովկասում ունեցած քաղաքական գերիշխանությանը, ստիպված հրաժարվում է վրացիների, հայերի և աղվանների շրջանում կրակապաշտություն տարածելու գաղափարից, **Իրանի ճնշման տակ լեզենդ է ստեղծվում** (ընդգծումները մերն են – Ը.Գ.) այդ ժողովուրդների ընդհանուր լուսավորչի՝ միաբնակություն քարոզող Գրիգոր Պարթևի մասին»²⁶: Այս նորամուծության հեղինակներն են «Ակնարկներ Վրաստանի պատմության» ակադեմիական բազմահատորյակի խմբագիրներ **Մ. Լորթքիփանիձեն**

22 Սովսես Խորենացի, Հայոց պատմություն (գրաբար, աշխարհաբար), Եր., 1981, էջ 283–285:

23 «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 222–227:

24 **Джанашвили М.**, История грузинской церкви, кн. 1, Обращение картвельцев, Тифлис, 1898, с. 37.

25 Տնւ **R. P. Mikheil Tarchnisvili.** Die Legende der heiligen Nino und die Geschichte des georgischen Nationalbewusstseins.– Byzantinsche Zeitschrift, N 40, 1940, s. 40–75.

26 Очерки истории Грузии, тл. IX, § 4, прим. 54.

և **Գ. Մուսխեթվիլին**, որոնք ծանոթագրել են **Տ. Պապուաշվիլու** հեղինակած գլխի հետևյալ հատվածն այն մասին, թե ինչու են վրացիները հրաժարվել Գրիգոր Պարթևից. «VII դ. սկզբին, Դվինի եկեղեցական ժողովի որոշմամբ, հայերի և վրացիների միջև եկեղեցական վերջնական խզում տեղի ունեցավ: Այսպիսով, հարց առաջացավ. կարելի է վրացիների լուսավորիչ համարել Գրիգորին, որը դարձի է բերել հայերին՝ ճշմարիտ հավատից հրաժարվածներին: Անհրաժեշտություն առաջացավ ունենալ սեփական լուսավորիչ, որը հերետիկոս հայերի հետ ոչ մի ընդհանրություն չունենար: Այդ անհրաժեշտությունն առանձնապես զգալի դարձավ VII դ. սկսած, երբ քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև պայքարն առավել սուր բնույթ ստացավ: Այդ պատճառով ի հայտ եկավ «Քարթլի դարձը», որի երկրորդ մասը նվիրված էր Նինոյի կյանքի նկարագրությանը: Ամբողջ երկի միջով կարմիր թելի պես անցնում է հեղինակի միտքը. Վրաստանն ունեցել է իր լուսավորիչը, որը ընդհանուր ոչինչ չի ունեցել Գրիգոր Լուսավորչի հետ: Վրացիների լուսավորչուհին ծնունդով Կապադովկիայից է, ազնվատոհմ ծնողների դուստր: Ինչպես նկատում է **Ի. Ջավախիշվիլին**, համաձայն այդ «Վարքի», «Գրիգոր Լուսավորիչը և հայերը չեն մասնակցել Վրաստանի քրիստոնեացմանը... Բացի Աստծուց և Սբ. Նինոյից, դարձի և գործի մեջ ոչ մեկը ոչ մի վաստակ չունի: Այս միտքն է գերիշխում ամբողջ երկում»²⁷:

Նման պայմաններում, անշուշտ, Խորենացին այլևս հիմք չպիտի լիներ, և վրաց հեղինակները սկսում են նրա տեքստը ամեն կերպ հարմարեցնել Նունեի (Նինոյի) մասին սեփական գրավոր հուշարձանին: Դա վերոնշյալ «Մուրբ Նինոյի վարքն» է, որի հնագույն տարբերակը ներառված է «Քարթլի դարձը» երկասիրության մեջ²⁸: Վերջինս, չնայած հայտնի է որպես IX դ. ժողովածու, սակայն նախանցյալ դարում, երբ է. Թաղաիշվիլին կարծիք է հայտնել, թե IX դ. երկը խմբագրվել է, իսկ ստեղծվել է VII դարում²⁹, ապա մեր օրերում, դրա հիման վրա, «Վարքի» վաղեմության սկզբնակետը շատ ավելի հեշտորեն սկսեց նորանոր փոփոխությունների ենթարկվել: Սա եզակի դեպք չէ:

Վերը ներկայացրինք, թե ինչպես են հատկապես վերջին տասնամյակներում վրաց հեղինակների կողմից փոփոխվել Գրիգոր Պարթևի կերպարն ու գործը: Ստորև կներկայացնենք Նունեին (Նինոյին) բաժին ընկած փոխակերպումները: Հավանական շահարկումներից խուսափելու համար մեջբերենք վրաց ականավոր գրականագետ **Կ. Կեկելիձեի** տեքստը.

«Այդ ժամանակաշրջանի (IX-X դդ.-Հ.Դ.) ոչ թարգմանական վարքագրական երկերից առաջին հերթին հարկ է նշել Սբ. Նինոյի Վարքը: Դա ծավալուն մի ստեղծագործություն է, բաժանված 16 գլուխների, որն իրենից ներկայացնում է Վրաստանում քրիստոնեության տարածմանը և պատմության մեջ Նինա անունը ժառանգած մի գերուհու առաքելական գործունեությանը վերաբերող բավականին անհաջող, կեղծ պատմագրական բնույթի զանազան ավանդագրույցների միակցում: Այդ Վարքի

27 Նույն տեղում, § 4.

28 Տե՛ս *Парарцзе* II., նշվ. աշխ.:

29 Տե՛ս *Թաղաիշվիլի* Է., Երեք պատմական քրոնիկոն, Թիֆլիս, 1890, էջ XCIII-XCIV (վրացերեն):

ամենահին տարբերակը, որը պահպանվել է X դ. վերջին քառորդի մի ժողովածուում, ստեղծվել է IX դ. կեսերից ոչ շուտ: Սկզբում Վրաստանում, ինչպես նաև Հայաստանում, տիրում էր այն համոզմունքը, որ քրիստոնեությունը Վրաստանում տարածվել է հայերի լուսավորիչ Սբ. Գրիգորի և նրա աշակերտների առաքելական գործունեության շնորհիվ: Սակայն հայերի հետ եկեղեցական բաժանումից հետո, հատկապես IX դ. կեսերից, երբ դավանական երկպառակությունն այդ երկու հարևան ժողովուրդների միջև իր լարվածության բարձրակետին հասավ, Վրաստանում սկսեցին վերացնել հայերի հետ նույնիսկ անցյալում եղած կրոնամշակութային կապերի հետքերը. հարմար չգտնելով հայերի հետ ընդհանուր առաքյալ ունենալը, նրանք սկսեցին փնտրել ինքնուրույն, հայերից անկախ լուսավորչի, որպիսին գտան ի դեմս այն գերուհու, որի մասին հակիրճ տեղեկացնում են բյուզանդական մատենագիրները: Եվ ահա մոտավորապես IX դ. կեսերին ստեղծվում է այդ գերուհու վերոնշյալ Վարքը, որը, հեղինակի խոսքերով, «հռոմեական իշխանական (մթավարական) տոհմից էր» կամ «որպես իշխանական ժառանգ էր»: [...]

Թե որքան էին վրացիները հետաքրքրվում իրենց լուսավորչուհու անձով, երևում է նրանից, որ այդ Վարքը մի ամբողջ շարք խմբագրական փոփոխություններ է կրել: Երկրորդ խմբագրությունը կատարել է պատմիչ Լեոնտի Մրովելին IX դ. վերջին, որը, վերցնելով հայտնի տարբերակը, այն, ինչը սկզբում էր, տեղադրեց վերջում, առաջին դեմքով պատմողին փոխարինեց երրորդ դեմքով, որոշ պարբերություններ կրճատեց, մի քանիսն ինքն ավելացրեց, նախադասություններ ու արտահայտություններ վերափոխեց: Գրական առումով Լեոնտիի աշխատանքն այնքան էլ չէր տարբերվում իր սկզբնաղբյուրից, այն, հաջորդ խմբագրողի խոսքերով, «ընթերցողների համար ձանձրալի էր և ունկնդիրների համար անհաճո»: Դավիթ Շինարարի պատմիչ Արսեն կրոնավորը, որպեսզի բավարարի ժամանակի հանրության գրական պահանջները, XII դ. երկրորդ քառորդին կատարեց այդ Վարքի նոր, թվով երրորդ խմբագրումը, որը հանդիսանում է առաջին երկուսի վերապատումը: XII դ. վերջին ոմն գրիչ, չբավարարվելով Արսենի ոճի գունագեղությամբ, էլ ավելի ձոխացրեց նրա աշխատանքը, այդպիսով կատարելով այդ Վարքի չորրորդ խմբագրումը:

Վերջապես Վրաստանի առաքելուհու հարցը շոշափեց Թամարի թագավորության առաջին տարիների կաթողիկոս Նիկողայոս Գուլաբերիձեն իր «Ընթերցումներ մցխեթյան կենսաբար սյան մասին» երկում: Հաղորդելով Նինոյի գործերի մասին, - սա արդեն նրա Վարքի հինգերորդ խմբագրումն է, - հեղինակը հարց է բարձրացնում. «ինչո՞ւ է հատկապես կին առաքվել Աստծո կողմից մեր լուսավորչության համար», ընդ որում այլ ըմբռնումների թվում նա ընդգծում է հետևյալը՝ «կանացի արժանապատվության հարգը»: Երկը երևան եկավ Թամարի անհատականության հարցի շուրջ քաղաքական խմբավորումների պայքարի ամենաթեժ պահին. կար այնպիսի կուսակցություն, որը պաշտպանում էր նրա թեկնածությունը, կար, հավանաբար, նաև այնպիսին, որն ընդդիմանում էր նրան, սկզբունքորեն համարելով, որ անհնարին է գահի վրա կին ունենալը: Նիկողայոսը Թամարի կողմնակիցն էր և իր երկում դատողություն անելով «կանացի

ՊԱՏՄԱՆԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

արժանապատվության հարգի մասին», գաղափարապես արդարացնում է կնոջ թագավորելու փաստը: Այսպիսին է Սր. Նինոյի Վարքի գրական ճակատագիրը, որը կրկին հաստատում է այն միտքը, որ «ամեն դարաշրջան բնութագրվում է ոչ միայն նոր հուշարձաններ ի հայտ բերելով, այլև հների նկատմամբ եղած վերաբերմունքով» (Պերետց)³⁰»³¹:

Եվ այս երկը, իր բոլոր խմբագրումներով, վրացիներն ավելի հավաստի են համարում, քան Խորենացու «Պատմությունը», որից ավելի հինը, ինչպես նշեցինք, ընդամենը մեկ աղբյուր է:

Գրիգոր Պարթևի մասին սթափ տեսակետների համառոտ ամփոփում կարելի է համարել **Տ. Պապուաշվիլու** սույն դիտողությունը. «Վրաստանի քրիստոնեությունն ընդունելու պատմությունը պահպանվել է ինչպես գրավոր աղբյուրներում, այնպես էլ բանավոր ավանդություններում և հայտնի է երկու մեկնակերպով. առաջինի համաձայն, որն ստեղծել են հույն պատ-

30 **Պերետց Վ. Ն.** (1870–1935) – ռուս բանասեր:

31 Մեջբերումը ներկայացնում էմք նաև ռուսերեն բնագրով՝ տարիմաստ մեկնարանությունները բացառելու համար: «Из оригинальных житийных произведений этого времени (IX– X вв.– Г.Д.) прежде всего нужно назвать Житие св. Нины. Это – обширное произведение, разделенное на 16 глав, представляет собою сцепление, довольно неудачное, разнообразных легендарных сказаний, псевдо-историографического характера, относительно насаждения христианства в Грузии и миссионерской деятельности одной пленницы, унаследовавшей в истории имя Нины. Самая древняя редакция этого Жития, сохранившаяся в сборнике последней четверти X века, составлена не раньше половины IX в. В начале в Грузии, как и в Армении, господствовало убеждение, что христианство в Грузии насаждено миссионерской деятельностью просветителя армян св. Григория и его учеников. Но после церковного разрыва с армянами, и особенно же с половины IX в., когда конфессиональная рознь между этими двумя соседними народами достигла высшей точки напряжения, в Грузии стали отмечать всякие следы религиозно-культурной связи с армянами даже в прошлом; находя неудобным иметь общего с армянами миссионера, они стали искать самостоятельного, независимого от армян, просветителя, какового нашли в лице той пленнице, о которой кратко повествуют византийские историки. И вот около половины IX века создается названная выше редакция Жития этой пленницы, которая, по словам автора, “была из (рода) римских владетельных особ (мтаваров)” или “подобна чадам владетельных особ”.

[...] Насколько грузины интересовались личностью своей просветительницы, видно из того, что это Житие претерпело целый ряд редакционных изменений. Вторую редакцию его выпустил в конце XI в. историк Леонтий Мровели, он взял только что рассмотренную редакцию, то, что здесь было в начале, поместил в конце, первое лицо рассказчицы заменил третьим, некоторые абзацы выпустил, иные сам прибавил, фразы и выражения обновил. В литературном отношении работа Леонтия недалеко ушла от своего источника, она, по словам дальнейшего редактора, “для читателей являлась надоедливой и для слушателей непотребной”. Чтобы удовлетворить развившимся к этому времени литературным вкусам общества, историк Давид Возобновителя монах Арсений, во второй четверти XII в. выпустил новую, третью по счету, редакцию этого Жития, которая является метафразированием первых двух. В конце XII в. какой-то книжник, недовольный цветистостью стиля Арсения, еще более разукрасил работу его и тем самым дал четвертую редакцию этого Жития.

Наконец, вопрос о просветительнице Грузии затронул католикос первых годов царствования Тамары Николай Гулаберидзе в “Чтении о животворящем столпе мцхетском”. Повествуя о деяниях Нины, – это уже пятая редакция ее Жития, – он ставит вопрос: “Почему же именно женщина была прислана Богом для нашего просвещения?”, причем в числе других соображений он подчеркивает “достоинство женской чести”. Сочинение появилось в разгаре борьбы политических группировок вокруг вопроса о личности Тамары: была партия, поддерживающая ее кандидатуру, была, видно, и такая, которая противилась ей по принципиальным соображениям, не находя возможным иметь на престоле женщину. Николай был сторонником Тамары и он в этом сочинении рассуждением “о достоинстве женской чести” идеологически оправдывает совершившийся факт воцарения женщины. Такова литературная история Жития св. Нины, еще раз подтверждающая ту мысль, что “каждую эпоху характеризует не только появление новых памятников, но и отношение ее к старым” (Перетц)».

Кекелидзе К., Конспективный курс истории древнегрузинской литературы // Этюды по истории древнегрузинской литературы, § 10, Тбилиси, 1944, Credo.ru

միջները, վրաց լուսավորիչներ են համարվում ոմն գերի կին և Հունաստանից հրավիրված հոգևորականությունը: Ըստ երկրորդ մեկնակերպի, որի ելակետը հայ գրականությունն է, վրաց լուսավորիչ է հայտարարվում Գրիգոր Պարթևը, որը մկրտել է նաև հայերին: Այս վերջին վարկածը տարածված էր ոչ միայն այն ժամանակ, երբ վրաց և հայոց եկեղեցիները բաժանված չէին և միմյանց միջև դեռևս դավանաբանական տարածայնություններ չկային, այլև եկեղեցական պատակտումից հետո ևս»³²:

Հիրավի, Քարթլին քրիստոնեացնելու գործին Գրիգոր Պարթևի ուղղակի կամ անուղղակի մասնակից լինելու հանգամանքը ժխտելն անօգուտ զբաղմունք է: Այս առումով կույս Նունեի գրական ճակատագիրը շատ ավելի բարեհաջող է դասավորվել: Նրա անձն ու գործը ոչ ոք չի ժխտում. տարածայնություններ կան ծագման, անցած ճանապարհի և նրան հրահանգողի վերաբերյալ միայն: Տարածայնությունների հիմնական մասը արհեստական է, որովհետև կրկին միտված է նրա կենսագրությունից հայկական բոլոր հետքերը ջնջելուն կամ, գոնե, նվազագույնի հասցնելուն, և երկրորդ՝ վրաց իրականության մանրամասներ ավելացնելուն: Դա կատարվում է տարբեր միջոցներով: Մինչև անգամ թարգմանության ժամանակ ինչ-ինչ մանրամասներ իմաստափոխելով: Ահա մեկ օրինակ է. **Թաղաիշվիլու** ռուսերեն թարգմանությամբ, ինչը ստիպված ենք մեջբերել բնագրով, Նունեն պատմում է. “Тогда я воздала хвалу господу богу и благодарение царице моей за весь этот рассказ и снова спросила ее: “Где та северная страна или где пребывает одежда та господа нашего?”. Она сказала мне: “Северная та страна граничит с горами Армении, страна языческая, подвластная грекам и ужикам”³³.

Նույն բանը **Մելիքսեթ-Բեկի** հայերեն թարգմանությամբ Նունեն պատմում է այսպես. «[Այդ Նիսիտրան, ի միջի այլոց,] ինձ ասաց. «Հյուսիսային երկիրը [ուր Սցիսեթում Քրիստոսի շապիկն է թաղված] գտնվում է Հայոց [երկրի] լեռնաստանում. այն հեթանոս երկիր է, հունաց և խուժկաց պետությանն ստորադրյալ»³⁴:

Ընդ որում, Մելիքսեթ-Բեկը բժախնդրորեն տեղեկացնում է. «Թարգմանությունը կատարված է համաձայն է. **Թաղաիշվիլու** 1906–1912 թթ. հրատարակության»³⁵: Հայ թարգմանիչը գերազանց գիտեր և վրացերեն, և ռուսերեն լեզուները, հետևաբար, պետք է ենթադրել, որ Թաղաիշվիլու պատրաստած տեքստն այնպիսին է եղել, ինչպես Մելիքսեթ-Բեկն է թարգմանել: Այսօր, սակայն, դրանք տարբեր են: “Северная та страна граничит с горами Армении” – կարդում ենք ռուսերեն, «Հյուսիսային երկիրը... գտնվում է Հայոց [երկրի] լեռնաստանում» – կարդում ենք հայերեն, և դրանց իմաստը տարբեր է: Խոսքը մի դեպքում սահմանակից առանձին երկրի, մյուս դեպքում՝ նույն աշխարհի բաղադրիչ երկրի մասին է: Վիրքը (Քարթլին), ուրեմն, Հայքին հարևան է, ոչ թե Հայքի բաղկացուցիչ մաս, և Նունեն Հայքից չի գնացել Վիրք. այն է բնագրից շեղվելու նպատակը, որն ամենայն

32 Очерки истории Грузии, гл. IX, § 4.

33 Обращение Грузии, гл. IV, Житие святой Нино. “Памятники грузинской исторической литературы”, VII, изд-во “Мецниереба” Тбилиси, 1989.

34 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., հ. Ա., էջ 22:

35 Նույն տեղում, էջ 20:

հավանականությանը կատարել է Թաղաիշվիլու թարգմանությունը խմբագրական մշակման ենթարկած **Չխարտիշվիլին**: Գիտական միտքը, սակայն, ընդունում է, որ թե՛ Նունեի առաքելության, թե՛ Վարքը գրելու դարերում Հայքն ու Վիրքը իսկապես մեկ էին աշխարհաքաղաքական բոլոր առումներով:

Արտաշես Մարտիրոսյանը խորհրդահայ այն սակավաթիվ գիտնականներից էր, ով ճշմարտագիր էր և պատվախնդրորեն վեր էր հանում զանազան մեքենայություններն ու կեղծարարությունները, հակիրճ ու համոզիչ խոսքով ընդդիմախոսում էր դրանց հեղինակներին: Ահա Նունեի Վարքի կրած փոփոխությունները՝ ըստ Մարտիրոսյանի ուսումնասիրության. «Նունեի գրույցը անցել է զարգացման անսովոր ուղի: Նրա նախնական տեսքը և հետագա խմբագրությունը չեն կապվում իրար: Գերի կնոջ մասին մեզ հաղորդում է IV դարի պատմիչ Ռուփինտսը, որ լսել է արքայազն Բակուրից: [...] Այս նույնը գիտեր Գեղասիոս Կեսարացին, որի պատմությունը կորած է: Թերևս Ռուփինտսը վերցրել է Կեսարացուց լատիներեն թարգմանությանը և կատարել որոշ խմբագրումներ, առանց շատ հեռանալու աղբյուրից: Զրույցի մեջ չենք գտնում ոչ մի անուն. գերի կին, մայրաքաղաք, թագուհի, թագավոր, հիվանդ երեխայի մայր: Որտեղ են կատարվել գործողությունները, նույնպես անհայտ է, և էրբ: Միայն հիշատակվում է մի պատմական անձնավորություն, Կոստանդին կայսր, որ հավանություն է տալիս իրադարձություններին և քահանաներ հղում: Բոլորովին անկերպ մի զրույց, որ չունի տեղագրություն, միջավայր և ժամանակ: Եթե Բակուրն է զրույցի հեղինակը, ապա լավ չի հյուսել և թույլ հիշողություն ունի: Արքայազնը չգիտի գահակալի, այսինքն իր հոր կամ հարազատ արյունակցի անունը: Նա չգիտի նույնիսկ, թե իր երկրի մայրաքաղաքը ինչպես է կոչվում:

Նունեի վարքը վրաց մատենագրության մեջ հանդես է գալիս X դարում: Հայտնի է շատրերդյան ձեռագրի օրինակը³⁶, որ Գերի կնոջ զրույցի հետ միասին միննույն թեման ունի: Այստեղ արտահայտված են զրույցի բոլոր հիմնական գծերը. Առաքելուհին գալիս է մայրաքաղաք, ապրում է մենակության մեջ, կատարում է հրաշագործություններ, բուժում է հիվանդ երեխային, թագուհուն, թագավորը որսի ժամանակ տեղի ունեցած հրաշքի ազդեցությամբ ընդունում է Քրիստոսի հավատը, կառուցում են եկեղեցի, առաքելուհին աղոթքով շարժում է ծանր սյունը, դիմում են Կոստանդին կայսեր, կայսրը քահանաներ է հղում, դարձի է գալիս ժողովուրդը:

Բայց շատրերդյան վարքում Գերի կնոջ զրույցը ձեռք է բերել մանրամասներ, որ լրիվ անծանոթ են Գեղասիոսի Պատմությանը և ունեն շեշտված դիմորոշ հոդ: Այստեղ ամեն ինչ կա իբրև սկզբնաղբյուր. պատմական դեմքեր կամ գործող անձինք, իրադարձություններ, աշխարհագրական միջավայր, տեղանք և ժամանակագրություն: [...] Գերի կնոջ մասին Գեղասիոս Կեսարացու հաղորդման և շատրերդյան Նունեի վարքի միջև դժվար է տեսնել բնագրային որևէ կապ, կամ որևէ օղակ, անցման պահ: Նույնն են միայն թեման և սյուժեն, և պարզ երևում է, որ ոչ թե Գերի կնոջ

36 Տե՛ս **Такайшвили В.**, Источники грузинских летописей. Три хроники, Тифлис, 1900, с. 16-27, 49-116.

գրույցը IV–X դարերի ընթացքում ապրել է բանահյուսական–ավանդական զարգացում, այլ ուղղակի Գերի կնոջ այուժեի վրա ստեղծվել է գրական երկ՝ վարքաբանական հորինվածք, որ հետո անցնում է մատենագրական մեծ ճանապարհ: «Տակավին քիչ ուսումնասիրված վրացական անվանացանկի մեջ խնդրին վերաբերող շրջանում չենք գտնում Նինո անունը: Վրաց ամբողջ սրբախոսական կամ հայրենագիտական մատենագրությունը լռում է այդ սրբուհու մասին, մինչդեռ հետագա ուշ շրջանի գրականությունը նրան մեծ և փառավոր տեղ է հատկացնում: Հանկարծ այն երևան է գալիս X դարում և սկսում է գովաբանվել մատենագիրների կողմից, հիշվել տոնացույցերի մեջ»,– գրում է **Գ. Փերաձեն**³⁷:

Այդպես: Այն ամբողջ շերտը, որ ավելացվել է Գեղասիոս Կեսարացու պատումի վրա, սկսել է նստվածք տալ X դարից, և պատմական չէ: [...] Պ. Պետերսը գրում է. «Այս վարքագրությունը, որ առաջին անգամ հրատարակ է գալիս 973 թվականին և դրանից հետո չի դադարում փոփոխություն կրելուց, չի կարող ուրիշ բան համարվել, եթե ոչ՝ վեպ, դյուցազնեպոսություն, գրույց կամ ինչ–որ կուգեթ»³⁸:

Կ. Կեկելիձեն մերժում է Գերի կնոջ գրույցի գրեթե այն ամբողջ նոր շերտը, որ կապվում է Նունեի հետ: Նա չի ընդունում վարքը, բայց դարձի պատմությունը փորձում է դնել իրական հողի վրա: «Այս աղբյուրների պատմական արժեքը համենայն դեպս, մեծ չէ,– գրում է Կեկելիձեն,– դրանք լի են գրույցներով, հակաժամանակաբանությամբ և իրար հակասող դեպքերով ու ավանդություններով»: Կ. Կեկելիձեն, Նունեին պոկելով իր վարքաբանական միջավայրից, փորձում է, սակայն, հավաստել նրա ազգային ծագումը. «Նունեի անձնավորության մասին այն գրուցախառն մանրամասները, որ գտնում ենք մեր հնագույն աղբյուրների մեջ, ընդունելի չեն: Նունեն ոչ բարձրաստիճանի դուստր էր և ոչ էլ պատրիարքի քրոջ աղջիկ: Նա ոչ Երուսաղեմում է ծնվել և ոչ էլ այնտեղ դաստիարակվել, նա եկել է ոչ Պոլսից և ոչ՝ Հռոմից: Նա ոչ հույն էր և ոչ հայ, այլ վրացի, թեպետ դա վարքագիրը դիտմամբ ժխտում է»³⁹:

Այդպես, չնայած մերժվում է ամբողջ վարքը, բայց չի մերժվում վարքաբանական հերոսի պատմականությունը: Կ. Կեկելիձեն Նունեի մասին աղբյուրների ծագումը դնում է 882–912 թվականների միջև»⁴⁰:

Կեկելիձեին ուրիշ մեկը չի երկրորդում, թե Նունեն վրացի է: Գուցե նրա համար, որ կարող էր բնական հարց առաջանալ. իսկ ի՞նչ ծագում ուներ նա, ո՞ր տոհմից էր, ինչո՞ւ ոչ մի տեղ չի հիշատակվում: Ի վերջո, վրացիների նախնիները IV դարում այնքան բազում չէին, որ նմանօրինակ հարցերի պատասխանները չունենային: Նշանակում է՝ Նունեն իսկապես դրսեկ էր և օտար: Նա կանչով չէր եկել, ուղարկված էր: Ո՞ւմ կողմից: Մինչև X դարը հայտնի էր՝ Գրիգոր Պարթևի: Այնուհետև, և առ այսօր, հարկավոր է այդ բոլորը հերքել, նորը ստեղծել: Դժվար է, սակայն, ամեն

37 **Peradze G.**, Die Probleme der ältesten Kirchengeschichte Georgiens, Oriens Christianus 29, 1932, s. 154.
38 **Peters P.**, Les débuts du christianisme en Géorgie d' après les sources hagiographiques, AB, L, pp. 5–58, 1932.
39 **Kekelidze K.**, Die Bekehrung Georgiens zum Christentum, Berlin, 1928, s. 45–50.
40 **Սարսիրոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 291–294:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հուլիս–սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

բան կտրականապես ժխտելը: Ուստի **Ն. Զանաշիան** գրում է. «Ուշագրավ է, որ վրաց-հայկական աղբյուրներում Քարթլիի քրիստոնեացումը այս կամ այն չափով կապվում է Հայքի քրիստոնեացման հետ»⁴¹: **Տ. Պապուա-շվիլին** հուշում է, որ տվյալ պարագայում երկը «ոչ միայն ջանում է պատմականորեն արդարացնել վրացիների դիրքորոշումը և, ի դեմս Նինոյի, առաջադրել հայերից անկախ առաքյալի, այլև նույնիսկ հարձակման անցնել և հայկական զենքն ուղղել իրենց իսկ դեմ՝ Սբ. Նինոյին վերագրելով ամբողջ Անդրկովկասի արևելյան մասի, մասնավորապես՝ նաև Հայաստանի լուսավորչի դերը»⁴²:

Հայկական զենք: Ցույց տանք այդ թվացյալ հայկական զենքերը: Դրանք այն հիշատակություններն են, որոնք կապված են հայ մարդկանց հետ: Կույս Նունեի կյանքում այդ անձինք հիրավի մեծ դերակատարություն են ունեցել⁴³: Նրանք են.

ա) **Նիսիփորա Գվնեցի**: Նունեն Երուսաղեմում երկու տարի այս հայ կնոջ մոտ է ապրել և դաստիարակվել, սովորել հայերեն: Նրան հարցուփորձ անելով է տեղեկացել Հիսուսի չարչարանքների, խաչելության, թաղման, հարության, հազուստի, խաչի մասին: Նրան է հարցրել Սցխեթի տեղը, որտեղ գտնվում էր Հիսուսի շապիկը: Նրա ուղեկցությամբ գնացել է Հռոմ, այնտեղ հանդիպել թագավորի դուստր Հռիփսիմեին և նրա դայակ Գայանեին: Ըստ էության, Նունեն արդեն իր դաստիարակչուհու և Երուսաղեմի պատրիարքի հոգածությամբ քարոզչական գործունեության համար համապատասխան կրթություն ու անհրաժեշտ հմտություն էր ձեռք բերել:

բ) **Հռիփսիմե և Գայանե կույսեր**: Սրանք թեև ազգությամբ հայ չեն, սակայն Նունեի անունը կապում են Մեծ Հայքի հետ: Առաջինը, ում կայսերանիստ քաղաքում քարոզել և մկրտել է Նունեն, եղել են Հռիփսիմեն, Գայանեն և նրանց գերդաստանից ևս հիսուն հոգի: Երկու տարի անց Նունեն նորահավատների իր խմբի հետ գաղթում է Մեծ Հայք, հասնում մայրաքաղաք: Այստեղ գրեթե բոլոր կույսերը մարտիրոսվում են, ոմանք փախչում են, իսկ Նունեն փրկվում է վարդի թիերի մեջ թաքնվելով: Այնուհետև նա ակնաստես է դառնում Հայոց Տրդատ թագավորի հետ կատարվածին, Գրիգոր Պարթևին վիրապից հանելուն և նրա գործած սքանչելիքների:

գ) **Ջավախքցի հովիվներ**: Նունեն կենդանի մնացած իր աշակերտուհիների հետ անցնում է Քարթլի: Խումբը Ջավախքի լեռներում՝ Փարվանա լճի մոտ, ձկնորսների ու հովիվների է հանդիպում: Հովիվները հայեր էին, և Նունեն նրանցից մեկին հայերեն հարցնում է, թե ո՞ր է Սցխեթը, և ցույց տրված ուղղությամբ գնալով՝ հասնում է Սցխեթ:

դ) **Սալոմե Ուջարմեցի և Պերոժավր Սյունեցի**: Այս կերպարները հայ պատմագիտության և գրականագիտության մեջ հանիրավի անուշադրության են մատնված: Երկուսն էլ Քարթլի հարս գնացած հայ ազնվական

41 Очерки истории Грузии, тл. I, § 1.

42 Очерки истории Грузии, тл. IX, § 4.

43 Տվյալ դեպքում կօգտվենք «Քարթլիի դարձը», «Մուրք Նինոյի վարքը», Լեոնտի Միովելու «Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմությունը» և Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկերից:

տիկնայք են: Եվ եթե Պերոժավրի մասին տեղեկությունները սուղ են⁴⁴, ապա նույնը չի կարելի ասել Սալումեի մասին: Նա հայոց Տրդատ արքայի դուստրն էր, վրաց Միրիան թագավորի Ռև անունով որդու կինը: Զգացվում է, որ Սալումեն Նունեին հովանավորում էր: Ըստ ամենայնի, նրա շնորհիվ էր, որ Միրիանը արգելք չէր հարուցում Նունեի ու նրա աշակերտների քարոզության դեմ:

Առանձնահատուկ հոգևոր կապ կար Սալումեի և Նունեի միջև: Երբ կենարար ծառի փայտից պատրաստում են առաջին երեք խաչերը, Նունեն կարգադրում է մեկը հանձնել Սալումեին՝ «Աստծո ճշմարիտ ծառային», որպեսզի նա կանգնեցնի իր տիրություն՝ Ուջարմա քաղաքում: Իսկ երբ Նունեն հիվանդանում է, նրան խնամելու է գալիս Սալումեն և մինչև վերջին պահը մնում է սուրբ կույսի մահձի մոտ: Սալումեի խնդրանքով է Նունեն պատմում իր մասին, և Նունեի խնդրանքով հատուկ Սալումեն ու Պերոժավրն են սկսում գրի առնել նրա պատմածը: Իսկ ինչո՞ւ հենց հայ իշխանուհիները: Գուցե այն պատճառով, որ Նունեն հայերէն էր խոսում: Ի միջի այլոց, հայտնի է, որ Նունեն հայերեն գիտեր, սակայն հայտնի չէ, որ նա նաև քարթվելերէն գիտեր:

Ահա այն հայկական հետքերը, որոնք ուղեկցում են Նունեի անվանը, և որոնք որպես «հայկական զենք» են նկատվում:

Եվրոպական և խորհրդային պատմագրության մեջ մինչև 1930-ական թվականներն աներկբայորեն ընդունված էր, որ Նունե/Նինոն Քարթլի է անցել Մեծ Հայքից (Մ. Բրոսե, Ն. Մառ, Հ. Գուսեն և այլք): Սակայն 1930-ականներից սկսած, չժխտելով, որ Քարթլիի մկրտության հարցում Նունեն գլխավոր դերակատարություն է ունեցել, այնուամենայնիվ, պարտադրաբար նախընտրելի է համարվում այն մտտեցումը, թե առաքելուհին Քարթլի է հասել ուրիշ ճանապարհով՝ ոչ Մեծ Հայքով:

Նրանց կովանները Քարթլիի լուսավորիչ «ոմն կնոջ» մասին հունահռոմեական հեղինակների գրառումներն են, որտեղ, ըստ իրենց, ոչինչ չի ասվում Քարթլիի քրիստոնեացումը Մեծ Հայքի քրիստոնեացմամբ պայմանավորելու մասին: Այդ հեղինակներից առաջինը Գեղասիոս Կեսարացին է (IV դ.): Այնուհետև Ռուփինոս Տյուրինոսն է (IV-V դդ.), որը լատիներեն է թարգմանել Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական Պատմությունը» և նրան է կցել երկու գիրք, որտեղ, օգտվելով նաև Գեղասիոսի Պատմությունից, ներկայացրել է 325-395 թթ. եկեղեցական դիպվածները: Գեղասիոսից օգտվել են նաև Թեոդորետոսը (V դ.), ապա Գեղասիոս Կյուզիկեցին, Սուկրատ Սքուլաստիկոսը և Սողոմենոսը: Թե ինչ են հաղորդում նրանք՝ թողնենք վրացի ուսումնասիրողները ներկայացնեն:

Ն. Զանաշիան գրում է. «Ըստ այդ տեղեկությունների՝ Քարթլիում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելը կատարվել է հետևյալ կերպ: Իբերների մոտ հայտնվում է ոմն քրիստոնյա գերուհի, որը քրիստոնեություն է քարոզում և հիվանդների բժշկում: Այսպես նա բուժում է նաև իբերների ծանր հիվանդ թագուհուն: Դա մեծ տպավորություն է թողնում իբերական թագավորի վրա, սակայն նա դեռևս չի վճռում մկրտվել: Որոշ

44 Պետք է ենթադրել, որ նա արքունական բարձրատոհմիկ տիկին էր, այլապես արժանի չէր լինի Նունեի մահվան մահձի մոտ գտնվելու պատվին:

Ժամանակ անց թագավորը գնում է որսի: Հանկարծ այնպիսի մի թանձր մառախուղ է պատում, որ թագավորը կորցնում է իր ուղեկցողներին և մոլորվում: Վախեցած՝ նա օգնության խնդրանքով դիմում է գերուհու աստծուն: Անմիջապես մառախուղը ցրվում է, և նորից օրը պայծառանում: Վերադառնալով՝ թագավորն իր մոտ է կանչում գերուհուն և, մանրամասն հարցում անելով նրա աստծու մասին, հավատում նրան: Այնուհետև սկսվում է եկեղեցու շինարարությունը: Որպեսզի ամրանա հավատը ժողովրդի մեջ, շինարարության ընթացքում հրաշք է տեղի ունենում: Շինարարները ոչ մի կերպ չէին կարողանում կանգնեցնել սյուներից մեկը, և գիշերը, գերուհու աղոթքների շնորհիվ, սյունը օդ է բարձրանում ու կախվում իր հիմնաքարի վրա: Հաջորդ առավոտյան, երբ ժողովուրդը կրկին հավաքվել էր կառուցվող եկեղեցու մոտ, սյունն ինքն իջնում է իր տեղը: Ավարտելով շինարարությունը՝ թագավորը մարդիկ է ուղարկում Կոստանդին կայսեր մոտ, խնդրանքով՝ հոգևորականների ուղարկել եկեղեցին օծելու և ժողովրդին մկրտելու համար: Չափազանց կարևոր է Գեղասիոս Կեսարացու տեղեկությունը (որը պահպանվել է նաև նրա երկից օգտված հեղինակների մոտ) այն մասին, որ այդ ամենը նրան է պատմել ոմն Բակուր, որը սերում էր իբերական թագավորական տնից»⁴⁵:

Հայ բանասիրության մեջ Ա. Մարտիրոսյանից առաջ Ն. Ակինյանն է ուշադրություն դարձրել Քարթլի դարձի նման դարձադարձելուն: Իր գրքի «Յառաջարան»-ում գրում է. «Ուսումնասիրութեանս ծանրակէտը կը հակի Բակուր վրացի իշխանի հաղորդած տեղեկութիւններու վրայ, որոնք սկսեալ Ե. դարէն աղբիւր ծառայած էին նախ յոյն և լատին պատմագիրներու և ապա անոնց ընթերցողներուն մինչև մեր օրերը՝ երևակայելու և պատմելու և գրոյցներ յօրինելու Վրաստանի քրիստոնէութեան դարձի մասին»:

Գրքի առաջին գլխի վերնագիրն է «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան և Վրաստան ըստ աւանդութեան Բակուր իշխանի», որը Ակինյանն սկսում է հետևյալ մտքով. «Թէպէտ ի վաղուց հետէ հայ, վիր և աղուան դրացի ժողովուրդներու ընդհանուր աւանդութիւնն եղած է մինչև Թ. դար, թէ Գրիգոր Լուսավորիչ աւետարանած է իրենց քրիստոնէութիւնը, բայց և այնպէս Ռուփինոս երէց իր Եկեղեցական Պատմութեան մէջ կը պատմէ թէ Վրաց աշխարհին առաքելուհին եղած է գերի կին մը, Կոստանդիանոսի

45 «Согласно этим сведениям, принятие христианства в качестве государственной религии в Картли произошло следующим образом. К иберам попала некая пленница-христианка, которая проповедовала христианство и исцеляла больных. Так она вылечила и тяжелобольную царицу иберов. Это произвело большое впечатление на иберийского царя, однако все еще не репался креститься. Через некоторое время царь отправился на охоту. Неожиданно сгустился такой туман, что царь потерял свою свиту и сбился с пути. Напуганный, он обратился с просьбой о помощи к богу пленницы. Тотчас же туман рассеялся, и опять настал светлый день. Возвратившись к себе, царь вызвал пленницу и, подробно расспросив ее об ее боге, уверовал в него. После этого началось строительство церкви. Для того чтобы укрепить веру в народе, во время строительства было явлено чудо: строители никак не могли установить один из столпов. Ночью, благодаря молитвам пленницы, столп вознесся в воздух и повис над своим основанием. Когда же на следующее утро народ вновь собрался у строящейся церкви, столп сам опустился на свое место. Окончив строительство, царь послал людей к императору Константину с просьбой прислать священнослужителей для освящения церкви и крещения народа. Чрезвычайно важно сообщение Геласия Кесарийского (также сохранившееся у авторов, пользующихся его трудом) о том, что все это ему рассказал некий Бакур, который происходил из иберского царского дома». Очерки истории Грузии, тл. I, § 1.

օրով, որ քրիստոնէութեան շահած է նախ թագուհին և ապա թագաւորը, և պատճառ եղած բովանդակ ժողովուրդի դարձին: Այս պատմութիւնը յսած են Երուսաղէմ Գեղասիոս Կեսարացի (սա Գեղասիոս Կուզիկեցոյ) «Վրաց թագաւորական տոհմէ» Բակուր իշխանէն, իսկ Ռուփինոս համանուն «Վրաց թագաւորէն», զոր համառօտի յառաջ կը բերեն նաև Սոկրատ (Եկեղ. պատմ., Ա. 20), Սողոմնոս (Եկեղ. պատմ., Բ., 7), Թէոդորետոս (Եկեղ. պատմ., Ա. 24) և ուրիշներ: Սոկրատի Եկեղեցական Պատմութիւնը 696ին թարգմանուելով հայերէնի՝ նոյնին ծանոթացած են նաև Հայերը, յատկապէս Վրահայերը: Սկսեալ Թ. դարէն հայ և վրական գրականութեան մէջ այդ անանուն «գերի կինը» յանուանէ կոչուած է Նունէ կամ Նինոյ, իսկ անանուն թագուհին և թագաւորը յորջուած են Նանա և Միիրա: Սոկրատի տողերն ընդլայնուելով սկսած են արդէն կազմուիլ զրոյցներ, «Պատմութիւն Ս. Իսաչին Նունէի», «Վարք Ս. Նունէի» և այլն, որոնք արձագանգ գտած են նաև Մովսէս Խորենացոյ Պատմութեան մէջ:

ԺԹ. դարու վերջերը և դարուս առաջին քառասնեակին շատերը գրադեցան Ս. Նունէի վարքով, նաև ներկայիս կը նուիրուին նոյն հարցին ուսումնասիրութիւններ: Ամէնուն ջանքն է հետազօտել այս զրոյցին տարրերը, վերհանել անոնց մէջ պատմական կորիզներ: Ամէնքն ալ գիտեն, թէ զրոյցներու աշխարհին մէջ կը դեգերին. բայց ոչ ոք համարձակութիւն ունի խոստովանելու, թէ չկա հոն ոչ մի պատմական կորիզ և հարկ է վերադառնալ հին աւանդութեան, որ երեք դրացի աշխարհներու ալ մէկ Լուսաւորիչ կը մատնանշէ՝ Գրիգոր անուն, որ իր քարոզութեան սկիզբն ըրաւ Հայաստան, ուր իրմէ յառաջ առաքելուի հանդիսացած էր Ս. Հռիփսիմէ»⁴⁶:

Վերադառնալով հին ավանդութեանը, հարկ է նշել նաև, որ, ի վերջո, ճշմարտութիւնն այն է, որ Նունեն Քարթլիի միակ քարոզիչն է: Նրանից առաջ ոչ ոք, շեշտենք՝ մանավանդ առաքյալներից, ոչ ոք չի քարոզել: Տարօրինակ է, որ վրացի հետազոտողների մի քանի սերունդ այս կամ այն առաքյալի անունն է տալիս, բայց չի կամենում խոստովանել, որ Նունեից առաջ ոչ մի քրիստոնյա ոտք չի դրել Քարթլի: Տեղեկությունը ոչ թե հայ, ասորի կամ հույն ու լատին հեղինակներից է, այլ հենց վրաց մատենագրի հեղինակած «Քարթլիի դարձից»: Ծանոթանանք. «Սուրբ և երանելի Նինոն, [...] երբ հասավ կխտեթական երկրի Բուդի բնակավայրը, հիվանդացավ մի հիվանդությամբ, որից էլ հենց պիտի մահանար: Այդժամ հավաքվեցին բոլոր թագավորներն ու երկրի իշխաններն իրենց կանանցով, ինչպես նաև մեծ թվով երևելի մարդիկ: [...] Խնդրում էին թագուհի Սալոմե Ուջարմեցին և Պերոժավր Սյունեցին, նրանց հետ նաև բոլոր իշխաններն էին խնդրում և հարցնում. «Ո՞վ ես դու և ինչպէս եկար մեր երկիր մեր փրկության համար: [...] Քեզանից ենք ահա իմանում, որ մարգարեներ են եղել նախքան աստծու որդու գալուստը երկիր, և ապա տասներկու, և էլի յոթանասուն առաքյալներ են եղել, սակայն քեզանից բացի, աստված մեզ մոտ ոչ մեկին չի ուղարկել»⁴⁷:

46 Ակինեան Ն., Քրիստոնէութեան մուտքը Հայաստան և Վրաստան, Վիեննա, 1949, էջ 1-2:

47 «Святая и блаженная Нино, [...] когда достигла земли кхоетской, местечка Буди, заболела болезнью, от которой и преставилась. Тогда собрались все цари и князья страны с женами и большое множество знатных людей. [...] Просили царица Саломе Уджармели и Перожавр Сивниели, и вместе с ними все князья спрашивали и просили: “Кто ты и как ты пришла в нашу

2. Սուրբ Մեսրոպ Մաշտոց

Երկրորդ քարոզիչը Մաշտոցը եղավ՝ Նունեից հետո: Եկեղեցին վերջնականապես հաստատվեց Քարթլիում, իսկ կարճ ժամանակահատվածում մի քանի վերադիտողներ իրար հաջորդեցին⁴⁸: Համակարգն սկսեց աշխատել՝ ժամերգություններ էին կատարվում, հարկեր էին հավաքվում, կուռքեր էին տապալվում, աղոթատներ էին կառուցվում: Սակայն երկրորդ քարոզիչը Մաշտոցը եղավ: Աներկբայորեն: Փաստը պետք է շատ բնական և տրամաբանական համարել, քանզի IV-VI դդ. եկեղեցին մեկ էր՝ հայվրացական (քարթվելական), և նրա գլխավորի՝ հայոց եպիսկոպոսապետի պարտականությունն էր իր հոգևոր ենթակայության տակ անցած երկրներում արմատավորել քրիստոսասիրությունը: Երկրորդ պատճառը, որ Հայքից պիտի քարոզիչ գնար, այն էր, որ Վիրքի (Քարթլիի) բնակիչները հիմնականում կան հայեր էին, կան հայերեն իմացողներ: Մաշտոցը ոչ միայն քարոզիչ, այլև հզոր կազմակերպիչ էր, և նրա համար դժվար չէր մյուսներին գրավելու գործը կազմակերպելը: Կորյունն է պատմում. «Կարծյալ՝ մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո՝ Քրիստոսի սիրելին (Մաշտոցը – Հ.Դ.) մտածեց հոգ տանել նաև բարբարոսական կողմի համար: Եվ սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար: Գրեց, դասավորեց ու օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ գնաց, իջավ Վրաց կողմերը: Եվ գնաց, ներկայացավ թագավորին, որի անունը Բակուր էր, և աշխարհի եպիսկոպոսին, [անունը]՝ Մովսես: Եվ թագավորն ու ազնվականները, բոլոր գավառներով միասին, շատ անսացին նրան ըստ աստվածային օրենքի:

Եվ նա իր արվեստն առաջարկելով՝ խրատեց, հորդորեց նրանց, և այն ժամանակ ամենքը հանձն առան նրա ուզածը կատարել: Եվ վրացերեն լեզվի մի թարգմանիչ գտավ, որ անվանվում էր Ջաղա, մի գրագետ և ճշմարտահավատ մարդ. այնուհետև Վրաց արքան հրամայեց իր իշխանության զանազան կողմերից և խառնադանց գավառներից մանուկներ ժողովել և տալ վարդապետի ձեռքը: [Նա էլ] նրան առավ, ուսման բովի մեջ ձգեց և հոգևոր սիրով ու եռանդով ի բաց քերեց [նրանցից] դևերի ու սնտի կուռքերի պաշտամունքի շարավառն աղտն ու ժանգը, այնքան անջատեց հեռացրեց [նրանց] իրենց հայրենի [ավանդություններից] և անհիշող դարձրեց, որ մինչև անգամ ասում էին, թե՛ «Մոռացա իմ ժողովուրդն ու իմ հոր տունը» (Սաղմոս, ԽԴ, 11. – ծնթ՝ Հ.Դ.): Եվ արդ՝ նրանց, որ այնքան **առանձին և բաժանված լեզուներից ժողովվեցին, մեկ աստվածային պատգամներով կապեց, դարձրեց մեկ ազգ, մեկ աստծու փառաբանիչներ** (ընդգծումը մերն է – Հ.Դ.): Նրանցից գտնվեցին և եպիսկոպոսական կարգին, վիճակին բարձրացած արժանավորներ, որոնց առաջինը, Սամուել անունով մի սուրբ և բարեպաշտ մարդ, եղավ արքունի

страну ради спасения нашего [...]. Ибо вот мы узнали от тебя, что были пророки до пришествия сына божия на землю, и потом двенадцать и еще семьдесят апостолов, и нам никого не прислал бог, кроме тебя». Обращение Грузии (пер. Такайшвили), гл. II.

48 Կեկելիձեն համարում էր, որ այդ ժամանակ Քարթլիի եկեղեցին կառավարվում էր մեկ եպիսկոպոսի կողմից: Տես **Кекелидзе К.**, Канонический строй в древней Грузии. Этюды по истории древнегрузинской литературы, IV, Тбилиси, 1957, с. 332-335.

տան եպիսկոպոս: Իսկ երբ Վրաստանի բոլոր կողմերում կարգի դրեց աստվածապաշտության գործը, այնուհետև բաժանվելով նրանցից՝ վերադարձավ Հայոց երկիրը և հանդիպելով Հայոց Սահակ կաթողիկոսին՝ պատմեց նրան բոլոր եղելությունների մասին, [և] միասին փառավորեցին աստծուն, մեծանուն Քրիստոսին»⁴⁹:

Մենք ոչ մի պատճառ չունենք չհավատալու Կորյունին և ականջ դնելու այլևայլ անհիմն դատողությունների: Կորյունը Մեսրոպ Մաշտոցի աշակերտն էր, նրա վարքագիծը և քաջ գիտակցում էր, որ ականավոր մարդու կենսագրության մեջ չի կարելի ստություն մտցնել, որովհետև երբ դա պարզվի, կասկածի տակ կզցի ամբողջը: Մեսրոպը մեծ էր նաև առանց Քարթլիի: Վրացի վրացագետներն այս ամենը ժխտում են օդի մեջ, ապրիորի, գրավոր ոչ մի վկայություն չունենալով (որտեղից, եթե մինչև IX-X դարեր, բացի սրբախոսական թարգմանված երկերից, մատենագրությունն ամբողջովին հայերեն էր և ընդհանուր): Նրանք առավել բուռն կերպով ընդվզում են այն ձմարտության դեմ, որ վրացերեն գիրը նույնպես Մաշտոցն է ստեղծել: Այս հակազիտական մղումն արդեն ավանդույթներ ունի, և քարկոծվում է ցանկացած մեկը, ով համարձակվում է ընդունելի համարել այդ տեսակետը: Հայկական և վրացական նախագիր այբուբենի ակնհայտ նմանություններն անգամ մեկ ձեռքով ստեղծված լինելու ապացույց չեն նրանց համար: Միակ հակափաստարկը, որ ներկայացնում են Մաշտոցի հակառակորդները, իբր Միովելու հայտնած տեղեկությունն է Փառնավազ թագավորի կողմից վրաց դպրություն ստեղծելու մասին: Հին դարերում գիր ունենալու վերաբերյալ պնդումները պատմական լուրջ կեղծիք են, որ վաղուց մտել են նաև դասագրքեր⁵⁰:

Ի պատիվ վերջին շրջանում Հայաստանում տպագրված դասագրքերի հեղինակների՝ նշենք, որ նրանք պաշտպանում են անեղծ ձմարտությունը: Ընթերցենք. «Վրաց գրի և գրչության սկզբնավորման ժամանակի և հանգամանքների վերաբերյալ ազգային սկզբնաղբյուրները ստուգելի տեղեկություններ չեն հաղորդում: Փառնավազ թագավորի ժամանակներին (մ. թ. ա. 3-րդ դար) վրագրելու ավանդությունը մատենագրություն է թափանցել 11-րդ դարում և հավաստիության երաշխիք չունի: Հնագրական վերլուծության հիմամբ վարկած է առաջադրվել, թե վրաց այբուբենը սերում է փյունիկյանից՝ մ.թ.ա. 7-րդ դար կամ արամեական գրի Արմազում (Մցխեթ) գործածված տարատեսակից՝ մ.թ.ա. 2-3-րդ դարեր: Այս վարկածները, սակայն, հակառակ ազգային ցանկալիության, չեն հաստատվում որևէ աներկբա կովանով: Հնագիտական պեղումները նույնպես 5-րդ դարից առաջ վրաց գրի ու գրչության որևէ իրական նմուշ չեն բացահայտել: Ըստ հայոց պատմիչ Կորյունի տեղեկության, վրաց այբուբենի ստեղծումը հաջորդել է հայոց գրերի գյուտին՝ Մեսրոպ Մաշտոցի հոգացողությամբ, վրաց թարգմանիչ Ջաղայի օժանդակությամբ ու ձեռքով: Ակադեմիկոսներ Կ. Կեկելիձեն և Ա. Շանիձեն հայոց, վրաց և աղվանից այբուբենները համարում են նույն աղբյուրից, միևնույն սկզբունքով և համաժամանակյա

49 Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի (գրաբար, աշխարհաբար), Եր., 1994, էջ 47-48:
50 Shtu История Грузии, учебник для VIII-X классов средней школы, Тбилиси, 1960, с. 47; Дзидзигури Ш., Грузинский язык, Тбилиси, 1968, с. 46; Вачнадзе М., Гурули В., Бахтадзе М., История Грузии (с древнейших времен до наших дней) в 3-х томах, Тбилисский государственный университет, с. 35. www.fictionbook.ru.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմեր, 2013
ՎԻՄ համահայկական հանդես

ստեղծված իրողություններ, ասել է՝ ընդունում են Կորյունի վկայությունը»⁵¹:

Մրանով հարցի էությունը թեև կարելի է լիարժեքորեն ներկայացված համարել, բայցևայնպես վերադառնանք Փառնավազին ու նրա ստեղծածին, նկատի ունենալով, որ այս առումով անհրաժեշտ է մի շատ կարևոր լրացում կատարել: Նախ՝ Մրովելու տեքստում հիշյալ նախադասությունը ընդմիջարկություն է, և ապա՝ ինչ ենք հասկանում «դպրություն» ասելով: Համենայն դեպս, սույն հարցադրումները բանասիրության մեջ երբեք չեն քննարկվել: Նույնիսկ Լ. Մելիքսեթ-Բեկը, ով կարծես թե շատ ավելի ուշադիր պիտի լիներ այս առումով, անվրդով գրում է. «Վրաց դպրություն (մծիղնորբորբա քարթուլի) ասելով՝ Լեոնտիոսը, անկասկած, ակնարկում է այն այբուբենի մասին, որը գոյություն պիտի ունենար վրացոց մեջ նախաքրիստոնեական շրջանում»⁵²: Համանման հայտարարություններ, որոնք ոչ ժխտում, ոչ հաստատում են վրացական կողմի վարկածը, տարածված են հայալեզու ուսումնասիրություններում:

Իսկ Մրովելին գրել է հետևյալը. «Եվ այսպես Փառնավազն առաջին թագավորն էր Քարթլիում՝ Քարթլոսի տոհմից: Սա տարածեց լեզուն վրաց (քարթուլի), և բացի վրացերենից ոչ մի այլ լեզվով այլևս չէին խոսում Քարթլիում: **Սա ստեղծեց [նաև] վրաց դպրությունը** (ընդգծումը մերն է – Լ.Բ.)»⁵³:

Այդպես իմիջիայլոց, անփութորեն չեն նետում կարևոր միտքը: Գիր ստեղծել, նշանակում է՝ հաղթանակել պատերազմում, թագավորություն հիմնել և նման ուրիշ մեծագործություն կատարել: Պատմիչը, որը գրչի ու մագաղաթի մարդ է, տառերի գյուտն այդքան շարքային գործ է համարում, որ պարզապես հարմար մի տեղում կցում է նախորդ ասվածին: Ինչ ասել է՝ «ստեղծեց»: Ստեղծեց անձամբ, թե՛ ստեղծվեց իր հրամանով, ի վերջո, ինչ գրվեց այդ գրով, ինչնու չգոյատևեց ու միայն հուշ թողեց այդ գիրը, իսկ գուցե նա կարգադրեց եղած որևիցե գիր գործածել արքունական կարիքների համար: Հետսամուտ է այս հապճեպ գրված ու թերատ էլ թողած նախադասությունը, և ուրիշ ոչինչ: Լուրջ չէ այն այսօր էլ լուրջ ընդունելը: Սույն դիտողության համար անուղղակի, սակայն մեկ այլ կովանի բացակայության պայմաններում ոչ պակաս ապացույց է այն փաստը, որ XII դ. հայերեն թարգմանության մեջ դա չկա:

Մրովելու վերոբերյալ հատվածին զուգահեռ բերված է նաև հայերեն հին թարգմանությունը. «**Եւ էր Փառնաւազ առաջին թագաւոր յազգէն Քարթլոսայ. սա ետ հրաման ամենայն երկրին խօսել զլեզուն Վրաց**» (ընդգծումը մերն է–Լ.Բ.)⁵⁴: Եվ վերջ, դպրության մասին ոչ մի խոսք: **Վստա–հաբար կարելի է ասել, որ վրացերեն բնագրում սկզբից նեթ եթե լիներ այդ կցուկը, ապա XII դ. հայերեն կթարգմանվեր, իսկ XX դ. Մելիքսեթ–Բեկը դա կդներ իր ժողովածուի մեջ**⁵⁵:

51 Հայաստանի հարակից երկրների պատմություն, ձեռնարկ միջն. դպրոցի 7-րդ դասարանի համար, Եր., 1992, էջ 155-156:

52 **Մելիքսեթ–Բեկ Լ.**, նշվ. աշխ., հ. Ա., էջ 180:

53 Նույն տեղում, էջ 151:

54 Նույն տեղում:

55 Ի դեպ, **Կ. Կեկելիձե**, այսպես կոչված, փառնավազյան այբուբենի մասին եղած կարծիքները համարում է «ղեռն չհիմնավորված ինչ–ինչ տեսություններ» (տե՛ս **Кекелидзе К.**, Конспектив-нъѣ курс..., § 1): Իսկ Գ. Ծուլախան, ռուսերեն հրատարակելով Մրովելու երկի հիմնական հատ–

Դպրության մասին: Գիրը դպրության նշանակություններից մեկն է, սակայն գրեթե չի պատահում, որ դպրությունը, գիրն ու այբուբենը նույնացվեն: Վերջիվերջո, դրանք տարբեր բաներ են: Այբուբենը նշանագրերի խումբ է՝ համապատասխանեցված տվյալ լեզվի հնչյունական համակարգին, և ծառայում է այդ լեզվով որևէ արժեքավոր խոսք գրի առնելուն: Դպրությունը մատենագրություն է, գրականություն, որը կարող է և այլալեզու լինել, ինչպես որ Քարթլիում V-ից մինչև X-XI դարերը դպրությունը, բացի սրբախոսական թարգմանություններից, հիմնականում հայերեն և հունարեն էր, Մեծ Հայքում մինչև V դարը՝ հունարեն, ասորերեն, ամենայն հավանականությամբ՝ նաև պարսկերեն:

Այսպիսով, Փառնավազը կարող էր իր երկիր գրավոր մշակույթ ներմուծել, սակայն դա չի նշանակում, թե նա մայրենի լեզվի համար տառեր է ստեղծել: Տառերը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Դուր է գալիս դա ունանց, թե ոչ՝ գիտության հետ բուրրովին կապ չունի: Ցանկալի է, որ նրանք ունկնդիր լինեն հետևյալ խորհրդին: «Կորյունի պատմածը, - գրում է բելգիացի արևելագետ Պ. Պետերսը, - Վրաստանում Մեսրոպի առաքելության և նրա կողմից վրաց այբուբենի ստեղծման մասին, վրաց քննադատներն առանց տատանվելու պարզ սուտ են համարում: Մենք չենք ձգտի նրանց ապացուցելու, որ իրենց նախնիները չեն ստորացվում, որ ինչպես մեր նախնիները, ինչպես հռոմեացիները, ինչպես հույները, նրանք էլ գրի առաջին դասերը վերցրել են ուրիշ ժողովրդից: Ինչևէ, դա չէ, որ անհանդուրժելի է նրանց հայրենասիրական հպարտությանը, **անհանդուրժելի է այն, որ լուսավորությունը եկել է Հայաստանից** (ընդգծումը մերն է - Հ.Բ.)»⁵⁶:

Ընդ որում, նկատենք, որ այդ անբնական «հայրենասիրական հպարտությունն» այնպես է պարուրել ժամանակակից վրացի վրացագետներին, որ նրանք անտեսում են նույնիսկ իրենց ավագ սերնդի կողմից կատարված գիտական եզրակացությունները: Այսպես, ակադեմիկոս **Ա. Շանիձեն** երևի թե առաջին հերթին նրանց համար է գրել, որ «Այսրկովկասի երեք մշակութավոր ժողովուրդների այբուբենները միանման սկզբունքի վրա են կառուցված»⁵⁷: Իսկ այստեղից կարելի է միայն մեկ ենթադրություն անել. եթե մինչև անգամ ընդունենք, որ այդ երեք այբուբենների հեղինակը նույն անձը չէ, ապա ակնհայտ է, որ դրանք ստեղծվել են գրեթե միաժամանակ, այսինքն՝ բացառվում է, որ վրաց գիրը առանձին և ավելի վաղ ժամանակներում ստեղծված լինի: Մակայն չենք տեսնում, որ ակադեմիկոսի տեսակետը շարունակում է ներկայումս էլ ուղղորդիչ դեր ունենալ: Կարծում ենք՝ այս կապակցությամբ առավել քան արդիական է հնչում

վածները, այնուամենայնիվ, համառոտել է նաև «դպրությանը» վերաբերող դրվագը (տե՛ս **Мрорели Л.**, Жизнь картийских царей, изд. АН СССР, Москва, 1979): Չնայած դրան, դեռևս ի հայտ են գալիս հարցն արտաշիրմելու ցանկություն ունեցողներ: **Մ. Չխարտիշվիլին** իր «Վրաց այբուբենի պատմությունից» հոդվածում, կրկին վերադառնալով Մրովելու տեղեկությանը, փորձում է «վրաց այբուբենը հեթանոսական շրջանում ծագած լինելու կոնցեպցիա» ներկայացնել: Հակառակը, ինչպես սույն հեղինակն է նշում, «անխուսափելի պարտության տանող քայլ է վրաց հետազոտողների համար: [...] Մեսրոպ Մաշտոցի կողմից վրաց այբուբենի ստեղծվելու մասին լուրը չպետք է տեղ գտնի վրաց այբուբենի ծագման կոնցեպցիայում» («Մնաթոբի», 1989, N 6, էջ 169-173, տե՛ս նաև՝ «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում [1988-1990], նյութերի ժողովածու, կազմեց՝ Հ. Բայրամյանը, Եր., 2001, էջ 73-82):

56 Մեջբերումը ըստ՝ **Մարտիրոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 411:

57 **Шанидзе А.**, Новоткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки, «Известия Института языка, истории и материальной культуры им. Н. Я. Марра», 1938, т. 4. с. 57.

մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանի վճռական խոսքը: Նա գրում է. «Քոլոր վրացի պատմական աղբյուրներն էլ ժամանակակից չլինելով Մեսրոպին, ինչ տեղեկություն էլ որ տան վրացական գրերի ծագման մասին, անվավեր են: Այս տեղեկությունները պետք է ընդունել միայն բանասիրական ենթադրություններ՝ զուրկ պատմական ստուգությունից: Ըստ այսմ վրացական գրերի ծագման, ինչպես առհասարակ վրաց պատմության շատ կետերի համար իբրև ժամանակակից և վավերական աղբյուր կարող են ծառայել հայ պատմագիրները և նրանց տված տեղեկությունները պետք է ընդունել ստիպողաբար՝ առ ի չգոյէ ուրիշ աղբյուրի: [...] Կասկածել Կորյունի վրա՝ նշանակում է առհասարակ ուրանալ պատմությունը»⁵⁸: Երևի թե հարկ է, որ այսօր էլ համանման հարցերում այսքան կատեգորիկ լինենք...

3. Սուրբ Շուշանիկ

Տարբեր պատճառներով Մեծ Հայքից Վիրք անցած և այնտեղ քրիստոնեության տարածման կամ ամրապնդման գործում նշանակալից դեր ունեցածներից մեկն էլ Շուշանիկն էր՝ հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրը: Նա Գուգարաց բղեշխ Վազգենի կինն էր, սակայն քարթվելների կողմից ընդունվում էր իբրև թագուհի, քանզի Քարթլին միակցվել էր Գուգարքին, և Վազգենը ընդհանուր Վիրքի բղեշխն էր: Այս հայ կնոջը վիճակված էր դառնալու անձնագոհության խորհրդանիշ՝ հանուն Վրաց հավատի և ազգային անկախության⁵⁹:

Երբ Վազգենը զրադաշտականություն է ընդունում, Շուշանիկն ըմբուտանում է դրա դեմ և առանձնանում: Ամուսնու հորդորները ոչ մի արդյունք չեն տալիս, անօգուտ են լինում նաև Վազգենի եղբոր՝ Ջոջիկի խնդրանքները, որը փորձում էր պալատ վերադարձնել նրան և հաշտեցնել ամուսնու հետ: Վազգենը կատաղությունից հրամայում է բանտարկել կնոջը ու չարչարանքների ենթարկել: Շուշանիկը չի ընկրկում, դիմանում է տանջանքներին, անսասան է մնում իր հավատքի մեջ: Նրան գոտեպնդում է իր խոստովանահայրը, որը նաև գաղտնի հոգ էր տանում տառապյալի համար: Վեց տարի Շուշանիկն անցկացնում է կապանքների մեջ: Լուրը տարածվում է ամենուր: Տարբեր տեղերից աղոթքներով մարդիկ են գալիս, հուսալով, որ, հաղորդակցվելով սրբուհու հետ, Աստծո զորությունից բաժին կստանան: Յոթներորդ տարում այլևս չի դիմանում Շուշանիկի մարմինը. ավարտվում է նրա երկրային կյանքը:

Ամենօրյա անարգանքներով ու կտտանքներով լի յոթ տարի տևեց Շուշանիկի մարտիրոսությունը: Անօրինակ սխարանք էր դա հանուն հավատի: Ահա թե ինչու Շուշանիկի մահը կորով ու ինքնահարգանք էր հաղորդում իր շրջապատին և հաղթանակների մղում բոլորին: Շուշանիկն արդեն պաշտելի սուրբ էր իր կենդանության օրոք, իսկ մահից հետո եկեղեցին պաշտոնապես սրբադասեց նրան: Նրա փառքն ավելի մեծացավ ու տարածվեց, շիրիմը դարձավ ուխտատեղի: Նրա մասին Վարք գրվեց, որն

58 Աճառյան Հ., Հայոց գրերը, Եր., 1968, էջ 185-186:

59 Տե՛ս Яков Пуртавели, Мученичество Шушаник, Предисловие, перевод В. Дондуа, Тбилиси, 1978.

առաջին վարքն էր վրացերեն լեզվով: Դրա հեղինակը երկար փնտրտուքից հետո համարվեց Հակոբ Ցուրտավեցին (Իակոբ Ցուրտավելի)⁶⁰: Այսօր վիճելի հարց է դարձել վկայաբանության սկզբնագրի հայերեն, թե՛ վրացերեն լինելը: Սակայն, եթե պնդողներ կան, որ երկը գրվել է V դարում (Ի. Աբուլաձե, Ա. Բարամիձե և ուրիշներ), ապա հարկ է ուշադրություն դարձնել մեկ այլ հանգամանքի վրա, ըստ որի՝ «վկայաբանությունը, հասկանալի է, պիտի գրվեր այն լեզվով, որով Ցուրտավում կատարվում էր ժամասացությունը»⁶¹:

Այսինքն՝ **հայերեն**, որովհետև մինչև VII դարը, երբ Կյուրիոն կաթողիկոսը կարգադրում է վրացերեն (քարթուլի) լեզուն գործածել ժամերգության մեջ, Ցուրտավի եկեղեցու պաշտոնական լեզուն հայերենն էր, և Շուշանիկը չափազանց նախանձախնդիր էր այդ հարցում⁶²:

Շուշանիկի անունը Մաշտոցի անվան պես դուրս չի մղվում ու շղարշվում, քանզի այդ անունը դրոշ էր, այդ անունով են վրացիներն այսօր կամենում ապացուցել, որ V դարում իրենք ազգային կյանք են ունեցել: «Պարսկասեր Վարսկենին,– գրում է Ռ. Բարամիձեն,– անհաշտորեն և կտրականորեն ընդդիմանում էր վրաց ողջ հասարակայնությունը՝ իր քաղաքական և գաղափարական առաջնորդ Շուշանիկի գլխավորությամբ»⁶³:

Շուշանիկը քաղաքական և գաղափարական առաջնորդ՝ այս էր քարթվելների ինքնուրույնության մակարդակը V դարում: Իսկ VI դարի վերջին տասնամյակներին արդեն, երբ Շուշանիկի նահատակությունից հարյուր տարուց ավելի էր անցել, Քարթլիի եկեղեցին Շուշանիկի անունը, անգամ աճյունը սկսեց գործադրել հայերի դեմ:

Դարաշրջանն ուսումնասիրած Վ. Դոնդուան փորձում է բացատրել դեպքերի ընթացքը: «Գուգարքը,– գրում է նա,– պարզվեց՝ այն վառողի պահեստն է, որտեղ VI-VII դարերի սահմանագլխին պիտի բռնկվեր հայ և վրաց եկեղեցիների պառակտման բոցը: Ցուրտավի եպիսկոպոս Մովսեսը (ծագումով հայ) և նրա թեմի հայ համայնքը չպաշտպանեցին վրաց եկեղեցու քաղկեդոնական և բյուզանդամետ կողմնորոշումը, դրանում տեսնելով ակտիվ վրացական ազգային քաղաքականություն անցկացնելու փորձ: Քարթլիի կաթողիկոս Կյուրիոնը, հավանաբար, նպատակադրվել էր միաձուլել Գուգարքի խառն ազգաբնակչությունը և եկեղեցական արարողությունների ժամանակ գործածությունից հանել էր հայոց լեզուն, չնայած նա խուսափում էր այդ մասին բացահայտ հայտարարելուց: Նրան քաջ հայտնի էր, որ Ցուրտավի եկեղեցում հայոց լեզվով պատարագ անցկացնելը կապված է Շուշանիկի անվան հետ և քանի դեռ նրա գերեզմանը հայ ուխտագնացների համար սրբատեղի էր, Գուգարքում իր մտադրած քաղաքականությունը դժվարությունների պիտի հանդիպեր: Այդ պատճառով, միանգամայն հավանական է, որ Քարթլիի կաթողիկոս Կյուրիոնի կողմից Շուշանիկի աճյունը Տփղիս տեղափոխելու մասին բանավոր գրույցը համապատասխանում է իրականությանը, թեև հայոց եկեղեցին այս վարկածին հակադրել է իր ավանդությունը Շուշանիկի աճյունը ոչ թե

60 Տե՛ս **Բարամյան Հ.**, Վրաց գրականությունը V–XIX դդ., գիրք Ա., Եր., 2007, էջ 16:

61 **Մուրադյան Պ.**, Մուրք Շուշանիկի վկայաբանությունը, Եր., 1996, էջ 178:

62 Տե՛ս **Ուխտանէս Հայոց** պատմություն, Եր., 2006, էջ 209:

63 **Барамидзе Р.**, “Мученичество Шушаник” – древнейший грузинский литературно-художественный памятник, дошедший до наших дней, Тбилиси, 1978, с. 4.

Տփղիս, այլ Հաղպատ տեղափոխելու մասին: Այսպես թե այնպես, համաձայն երկու վարկածների էլ, ինչ-որ մի ժամանակ Շուշանիկի աճյունը Ցուրտավից տեղափոխվել է: Հարց է, թե երբ է դա տեղի ունեցել և ինչն է հանդիսացել դրա պատճառը:

[...] Այսպիսով, վրաց և հայոց եկեղեցիների միջև տեղի ունեցած պառակտումը կապված է Շուշանիկի անվան հետ: Վրաստանում (Քարթլիում - Հ.Գ.) ապրող հայերի համար նա դարձել էր հարազատ հայոց դավանանքի խորհրդանիշ, իսկ նրա գերեզմանը՝ վերջինիս նյութելն մարմնացումը: Քարթլիի եկեղեցին փորձում էր վերացնել այդ խորհրդանիշը, բայց այնպես, որ դույզն - ինչ չխաթարի սրբի հիշատակը: Ընդհակառակը, նա մարտիրոսուհուն դրեց վրաց ազգային սրբերի առաջին շարքում: Ըստ երևույթին, դրա համար առնվազն երկու պատճառ կար. նախ, որ, հիշյալ շրջանում քարթվելական պետության ունեցած միջազգային դերը նկատի ունենալով, Շուշանիկի պայքարն իր ամուսնու և ընտանիքի կողմից մագդեականություն ընդունելու դեմ անտարակույս նշանակում էր նաև պայքար հանուն վրաց ազգային անկախության, և վրաց (քարթվելական) եկեղեցին հավուր պատշաճի գնահատեց այդ անձնագոհությունը, և երկրորդ՝ Շուշանիկին վրաց սրբերի շարքում դասելը վերացրեց նրա գերեզմանի վրա մինչ այդ բացառապես հայոց ծեսով արարողություն կատարելու ավանդույթը»⁶⁴:

Ի դեպ, Ջավախիշվիլին հատուկ ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ Աբրահամ կաթողիկոսի համոզմամբ Կյուրիոնի գործած ամենամեծ մեղքը Միվսես եպիսկոպոսին իր պաշտոնից հեռացնելուց առավել՝ Ցուրտավի եկեղեցում պատարագը հայերեն լեզվով կատարելու կարգից հրաժարվելն էր⁶⁵: Հետագայում ակադեմիկոս **Զ. Ալեքսիձեն** անուղղակիորեն հաստատում է հայերենի գերակայության փաստը տարածաշրջանի երկրներում, երբ Կովկասյան Աղվանքը ներկայացնելիս գրում է, որ տեղի պարսիկ Արշակունիները հայացել էին, իսկ եկեղեցու և երկրի լեզուն հայերենն էր, ապա փակագծում ավելացնում է՝ «**ինչպես Քարթլիում**»⁶⁶: Դիպուկ է Պ. Մուրադյանի դիտողությունն այս առումով, ըստ որի՝ «Պետք է ձիշտ հասկանալ Primus inter pares կարգավիճակը, որը նաև լեզվին է վերաբերում»⁶⁷:

Այսպիսով՝ լեզուն փոխելը նաև յուրացում էր նշանակում, որն անտարակույս գիտակցում էր Կյուրիոնը: Իսկ այդ յուրացումն արդեն XX դարում հետևյալ կերպ է արտահայտում **Մարիամ Լորթքիփանիձեն**, գրելով. «Արևելավրացական եկեղեցու լեզուն ի սկզբանե վրացերենն էր»⁶⁸: Այդ դեպքում ինչո՞ւ էր Կյուրիոնը վրացերենը հաստատում Ցուրտավում: Նման մոտեցմամբ միթե ականայից հակառակ արդյունքի չենք հասնում, քանզի այդ դատողությունից բխում է, որ VII դարում Ցուրտավի թեմը Մցխեթի աթոռին չէր պատկանում: Հետևաբար՝ ինչպե՞ս որակենք Կյուրիոնի քայլը՝ զավթում, բռնագրավում...

64 Яков Цуртавели, Мученичество Шушаник, Предисловие...

65 Տե՛ս **Ջավախով**, նշվ. աշխ., էջ 528:

66 **Ալեքսիձեն Զ.**, Կովկասյան Աղվանքի գրչությունը, լեզուն և դպրությունը (վրացերեն), Թբիլիսի, 2003, էջ 26-32:

67 **Մուրադյան Պ.**, Ջագա Ալեքսիձեն... (գրախոսություն), ՊԲՀ, 2005, N 2, էջ 332:

68 **Լորդքիպանիձե Մ.**, Грузия во второй половине V века, Тбилиси, 1978, с. 13.

Չարժե պատմական փաստերին կամայական մոտեցում ցուցաբերել: Այս պարզ միտքը հաստատելու համար մենք, այսպես կոչված՝ հայ-վրացական եկեղեցու առաջին շրջանի պատմության երեք կարևորագույն դրվագներկայացրինք՝ սուրբ Նունեի, սուրբ Մեսրոպ Մաշտոցի և սուրբ Շուշանիկի նվիրական գործունեության ընդհանուր խորապատկերով: Եզրակացությունը մեկն է. **Մեծ Հայքում քրիստոնեության հաստատումից հետո Քարթլիի եկեղեցու հիմքը նույնպես դրվել է Մեծ Հայքից գնացած քարոզիչների կողմից, որը հետագայում ամրապնդվել է կրկին Մեծ Հայքից գնացած եկեղեցական գործիչների ու քրիստոսասեր անձանց կողմից:** Ստորև կբերենք մի քանի լրացուցիչ փաստեր, որոնց համաձայն՝ Քարթլիի եկեղեցին ոչ թե պարզապես ի հոգևոր էր ընդունում Հայաստանյայց եկեղեցու նախաթոռությունը (ինչպես որ պնդողներ կան), այլ առնվազն մինչև VII դար նրա նվիրապետական-եկեղեցական կառույցի մասն էր կազմում:

4. Այլ փաստեր ու վկայություններ

Պարադոքս կարող է թվալ, սակայն ապացույցներն ավելի շատ եկեղեցական պառակտման շրջանից են: Բանակոիվների ընթացքում ու փոխադարձ մեղադրանքների մեջ հաճախ էր հիշատակվում, որ անցյալում լավ էր՝ միասին էին: Օրինակ՝ Հայոց կաթողիկոս Աբրահամը Վրաց կաթողիկոս Կյուրիոնին գրած նամակում հիշեցնում է. «Ձեր ու մեր մէջ առհասարակ սերմանեցին ուղղափառ աստուածապաշտութիւնը, նախ երանելի սուրբ Գրիգորը, և ապա Մաշտոցը»⁶⁹: Վրաց կաթողիկոս Կյուրիոնը Հայոց կաթողիկոս Աբրահամին գրած նամակում երանությամբ է նշում այդ միաբանությունը. «Հարքն մեր և ձեր միաբան ունէին զհաւատս, յորմէ հետէ և սուրբն Գրիգոր զուղղափառ հաւատ կարգեաց»⁷⁰:

Փաստը, իբրև անժխտելի իսկություն, արտացոլված է նաև միջպետական պաշտոնական գրություններում: Վասպուրականի Հայոց թագավոր Գագիկը Բյուզանդիայի Ռոմանոս կայսրին ուղղված «Վասն հավատոյ» թղթում գրում է. «Հայք և Վիրք և Աղուանք միաձայն խոստովանութեամբ, ի ժամանակս Բաբգեն Հայոց կաթողիկոսի, ժողովեալ ի սուրբ կաթողիկէն Հայոց, ընդ որս Գաբրիէլ Վրաց կաթողիկոս, և ընդդէմ ժողովոյն միախոհ եղին ընդդիմակս. մինչև ցԿիւրիոն Վրաց կաթողիկոս»⁷¹:

Զգալի են նաև վրաց աղբյուրներում պահպանված վկայությունները: Հայերի հետ նույն վարդապետությունը դավանելու անուղղակի խոստովանություն է Գեորգ արեղայի (XI դ.) «Գեորգ (Գիորգի) Սկեռնցվո վարքը» վարքագրության հետևյալ տողերը. «Մեր երկիրը հեռու էր Հունաստան երկրից (Բերձենաստանից). [այդ պատճառով] մեր երկրում իբրև որում ցանվեցին հայոց (տամեխների) չար սերմերը՝ ըմբոստ և նենգ»⁷²: Եվս մեկ օրինակ բերենք անանուն հեղինակի (XI դ.) «Քարթլիի մատյանը» գրվածքից. «Մինչ Դինար թագուհին ու սրա որդի Իշխանիկն Հերեթը հերձվածող էր,

69 Ուխտանէս, նշվ. աշխ., էջ 170:

70 Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 171:

71 Գիրք թղթոց, էջ 300:

72 Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., հ. Ա., էջ 119:

և այս Դինար թագուհին փոխադրեց (ուղղեց) Հերեթը հայոց հերձվածքից դեպի ուղղափառություն»⁷³:

Հայոց կողմից եկածների ձեռքով քրիստոնեանալուց և դավանանքի նույնությունը պահպանելուց հետո երրորդ հանգույցը, որով Քարթլիի եկեղեցին կապված էր Մեծ Հայքի եկեղեցու հետ՝ տեղի եպիսկոպոսապետի կարգում էր Հայոց կաթողիկոսի կողմից: Անշուշտ, ծանոթ ենք բոլոր այն գրույցներին, ըստ որոնց Վրաց եկեղեցապետ նշանակում էր կամ Կոստանդնուպոլսի, կամ Կեսարիայի, կամ էլ Անտիոքի պատրիարքը: Դրանք իսկապես թանկ տեղեկություններ են, որովհետև ձեռք են բերվել հսկայական քանակությամբ օտարալեզու գրականություն կարդալով և մեծ հնարամտությամբ տարբեր-տարբեր տեղերից ինչ-ինչ փշրանքներ կցմցելով⁷⁴: Սակայն ինչու այդքան ջանք գործադրել և այդքան կասկածելի արդյունք ստանալ, եթե կարելի է պարզապես չամտեսել սեփական մատենագրությունը: Ի վերջո, Լեոնտի Միովելին (XI դ.)՝ առաջին վրաց պատմիչն է գրում, որ «և ետ նորա (Յակոբ եպիսկոպոսի)՝ Ներսէս կաթողիկոսն Հայոց ձեռնադրեաց զսարկաւազն իւր զՅակոբ (ուղիղ՝ զՅովել)՝ եպիսկոպոս Վրաց, և առաքեաց»⁷⁵: Հանրահայտ Կյուրիոնը նույնպես նշանակվել (օծվել) էր Հայոց կաթողիկոսի կողմից և, չնայած «գրով և պատգամաւորաւ յանձն էր արարեալ»⁷⁶ Հայոց հետ մի մնալ, սակայն ինքն էլ քակեց կապերը՝ Աբրահամ կաթողիկոսին գրելով՝ «եթե այսուհետև մի չէ հավատքն, քայքայողն դուք եք»⁷⁷ և այլն: Ավելորդ չէ նշել, որ նա Վաղարշապատի սուրբ կաթողիկեի փակակալ էր ծառայում, «երբ վրացիները Հայոց կաթողիկոս Մովսեսից իրենց համար առաջնորդ խնդրեցին»⁷⁸:

Պատմում է Ուխտանեսը. «Այսպէս այդ ժամանակներում վախճանուեց Վրաց կաթողիկոսը, և երկրի իշխաններն ու նախարարները Մովսէս կաթողիկոսի մօտ մարդիկ ուղարկեցին՝ եպիսկոպոսներով հանդերձ՝ խնդրելու իրենց համար առաջնորդ: Իսկ նա մտածեց, որ իր տանից տայ նրանց առաջնորդ՝ երկու կողմերի հաւատը միաբան ու հաւատարիմ [պահպանելու] համար, միաժամանակ նաև հաստատելու համար նախորդ հայրերի ուխտը, որոնք եղել էին իրենից առաջ: [Ուստի] ձեռնադրեց Կիրիոնին»⁷⁹: Մարի Բրոսեն Կյուրիոնի համար նույնիսկ այսպիսի բնորոշում ունի. «Կիրիոն՝ Վրաստանի Հայոց եկեղեցու առաջնորդը...»⁸⁰:

Բազմաթիվ նման հաստատումներ կարող ենք բերել՝ մատնանշելու, որ Հայաստանյայց և Քարթլիի եկեղեցիները տևական մի շրջան ոչ միայն սերտ առնչակցություններ են ունեցել, այլև պարզապես մեկ են եղել՝ այս

73 Նույն տեղում, էջ 203:

74 Ահավասիկ այս մեկը. «Վրացի մատենագիր և աստվածաբան Եփրեմ Սցիրեն, նկատի ունենալով «Անտիոքյան ժամանակագրությունը» (X դ.), նշում է, որ եկեղեցի հիմնադրելու և կազմակերպելու նպատակով Սցիսեթ է եկել Անտիոքի արքեպիսկոպոս ար. Եվստաֆիոսը (324-330): Աղբյուրը, որին հղում է կատարել հայր Եփրեմը, չի պահպանվել, սակայն գոյություն ունի ժամանակագրության պլավոնական թարգմանությունը, որը կատարել է Նիկոն Սկլեռնցին, որտեղ կան այն նույն տեղեկությունները, որոնք օգտագործել է Եփրեմը»: **Патриархъ И.**, նշվ. աշխ.:

75 **Մելիքսեթ-Բեկ Լ.**, նշվ. աշխ., հ. Ա., էջ 175:

76 Գիրք թղթոց, էջ 164:

77 Տես **Ալիսեան Ն.**, Կիրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 240:

78 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 129:

79 **Ուխտանես**, նշվ. աշխ., էջ 109:

80 **Ալիսեան Ն.**, Կիրիոն..., էջ 23:

կամ այն չափի ինքնավարությամբ Քարթլիի եկեղեցին և թեկուզ իբրև «առաջինն ի հավասարաց» Հայաստանյայց եկեղեցին: Սակայն, ինչպես տեսնում ենք, որքան էլ այդ կապը «ի հոգևորս» համարողներն իրենց դիրքերը ամուր հիմքերի վրա կառուցած են համարում, այնուամենայնիվ, կան մի քանի անժխտելի փաստեր, որոնք երկու եկեղեցիների հարաբերության հարցում կասկածի տեղ չեն թողնում Քարթլիի եկեղեցու վարչական-մվիրակական ենթակայության մասին: Դրանցից մեկը Քարթլիի քահանայապետի ձեռնադրումն էր Հայոց կաթողիկոսի կողմից, մյուսը՝ որ Քարթլիի եկեղեցու արարողության լեզուն առ Կյուրիոն հայերենն էր:

Օրմանյանն ընդհանրացնում է. «Գրիգորիս, Լուսաուրչի թոռը, որ հիւսիսային երկիրներու կաթողիկոս ձեռնադրուեցաւ, ընդհանուր եպիսկոպոսապետ եղաւ Կովկասի կողմերը եղող ազգերուն, բայց յետ ժամանակաց երկու աթոռներ գատուեցան, երբոր Վրացիներ և Աղուաններ գատ գատ թագաւորութիւններ եղան, բայց երկուքն ալ Հայոց աթոռին գերիշխանութիւնը կը ձանչնային, կաթողիկոսին Հայոց աթոռէն կը ձեռնադրուէին, և դաւանական խնդիրներու մէջ Հայոց կը հետևէին, և Հայոց ժողովներուն կը մասնակցէին իբրև նոյն եկեղեցւոյ անդամներ: ...

Նոյն կացութիւնը կը շարունակէր Գ. դարուն սկիզբէն մինչև Զ. դարուն վերջը, գրեթէ երեք դար ամբողջ»⁸¹: VI դարի հեղինակ Զաքարիա Հռետորի «Ժամանակագրության» Շարունակողն ասես շարունակում է. «Այս հյուսիսային շրջանում կան հինգ հավատացյալ ժողովուրդ, որոնք ունեն քսանչորս եպիսկոպոս, և իրենց կաթողիկոսը Դվինում է՝ Պարսկական Հայաստանի գլխավոր քաղաքում»⁸²:

Երկի հայերեն թարգմանիչ Հ. Մելքոնյանի կարծիքով՝ «ասորի եկեղեցականի այս վկայությունը արժանի է հատուկ ուշադրության, որովհետև այս հինգ ժողովուրդներին նա գիտի որպես կրոնական մի ամբողջության մեջ մտնող համայնք՝ իր Դվինի կաթողիկոսով և քսանչորս եպիսկոպոսություններով: Այս փաստը գալիս է մեկ անգամ ևս հաստատելու հայկական աղբյուրների ճշմարտապատում լինելը, այն մասին, որ մինչև VII դարը Հայաստանի հարևան եկեղեցիները ղեկավարվել են Հայոց կաթողիկոսության գլխավորությամբ, այսինքն քսանչորս տարբեր եպիսկոպոսություններ թեմական իրենց վիճակով մտել են հայ կաթողիկոսության իրավասության ներքո»⁸³:

Խնդրո վերաբերյալ վերջին տասնամյակների կարևոր ուսումնասիրություններից է Պ. Անանյանի աշխատությունը: Քննելով Հայաստանյայց եկեղեցու և Կեսարիայի աթոռի իրավական կապերը՝ հեղինակը գրում է. «Կեսարիոյ իրաւունքն ալ հիմնուած է իր առաքեալին, Ս. Գրիգորի ջանքերով ու վաստակով Հայաստանը ամբողջութեամբ դարձի բերած ըլլալու արդիւնքին վրայ. ճիշտ ինչպէս Վրաստանի և Աղուանից կապը Հայ եկեղեցւոյ հետ հիմնուած է Ս. Գրիգորի և անոր յաջորդներու ձեռքով քրիստոնէութեան հոն ծաւալելուն և եկեղեցական կազմակերպութիւն ստանալու վրայ»⁸⁴: Սա

81 Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 683:

82 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Եր., 1976, էջ 313:

83 Նոյն տեղում, էջ 231-232:

84 Անանեան Պ., Ս. Գրիգոր Լուսաուրչի ձեռնադրութեան թուականը և պարագաները, Վենետիկ, 1960, էջ 164: Տես Մեծ Հայքի և Աղվանքի եկեղեցիների ուղղահայաց հարաբերությունների մասին տես АКОпян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 124-142.

դիտարկում չէ, այլ փաստ է: Ահա հիմքը. Գրիգորը «սուրբ գրքին քաջա-
ծանոթ մարդկանց քահանա էր նշանակում, ոմանց ուղարկում էր Վրաց և
Լազերի երկիրը, իսկ ուրիշներին՝ Աղվանք»⁸⁵:

Եզրակացություններ

Այստեղ կարելի էր վերջակետ դնել, որովհետև խնդիր ունեինք պար-
զապես վերհիշելու և հավաքաբար ներկայացնելու հայոց դերակատարու-
թյունը Վիրքի քրիստոնեացման գործընթացում: Անշուշտ, միայն ամսու-
սանքով է պետք նշել, որ այսօր դրա անհրաժեշտությունը խիստ զգացվում
է, քանզի հատկապես վրաց նոր պատմագրության ներկայացուցիչները,
կամենալով վերարժևորել իրենց ժողովրդի պատմությունը, հարկ են հա-
մարում առաջին հերթին վերաշարադրել ամբողջ տարածաշրջանի պատ-
մությունը⁸⁶: Իսկ դա հաճախ ոչ միայն խեղաթյուրում է հարևան ժողո-

85 Ագաթանգեղոսի պատմության հունական..., «Էջմիածին», 1966, N Թ-Ժ, էջ 84:

86 Իր հողվածներում **Նիտո Ապցիաուրի**ն սևեռուն նախատրամադրվածությամբ փորձում է ապացուցել, որ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեությունը տարածել է միմիայն հայերի մեջ և ընավ կապ չունի իբերների, քարթվելների, աղվանների ու կովկասյան ժողովուրդների քրիստոնեացման հետ: Այդ նպատակով մինչև իսկ հատուկ ուսումնասիրության առարկա է դարձրել Սուրբ Գրիգորի երթուղիները, նշանակում կերպով ապացուցելով, որ վերջինս դուրս չի եկել Մեծ Հայքի սահմաններից (տես **Առաջադր. II.**, К вопросу о миссионерской деятельности св. Григория Просветителя, ինչպես նաև նույնի՝ *Границы проповеди Григория Просветителя, Проблемы истории Закавказья, Тбилиси, 1991, с. 85-102*): Ամբողջապես նկատենք, որ հիրավի ծշմարիտ են հարգարժան տիկնոջ բերած փաստարկները՝ Սուրբ Գրիգորն իսկապես անձամբ դուրս չի եկել Մեծ Հայքի սահմաններից: Բայց նշենք նաև, որ այդ հանգամանքը տվյալ դեպքում բացարձակապես ոչինչ չի նշանակում, և դա ոչ մի կապ չունի նրա կողմից մինչև Կովկաս ու Կասպից ծով նոր կողմը տարածելու հետ: Նախ՝ չնոռանանք, որ իբերների, լազերի ու աղվանից թագավորներն իրենք էին եկել մասնակցելու Հայոց Տրդատ արքայի հետ Արածանի ափին տեղի ունենալիք զանգվածային մկրտությանը, և ապա՝ չէ՞ որ Գրիգոր Մեծ Հայքի սահմաններից դուրս կովկասյան և նախակովկասյան ժողովուրդների մեջ քրիստոնեությունը տարածում էր ուղարկված միսիոներների միջոցով (Նունե և ուրիշներ) և նրանց համար եպիսկոպոսներ նշանակելով, որի իրավունքը նրան վերապահել էր Կեսարիայի արքեպիսկոպոսը: Ընդ որում, Վիրքի և Աղվանքի համար Գրիգոր Լուսավորիչն առաջին եպիսկոպոս է նշանակում իր թոռ Գրիգորիսին: Այս առումով վերը բերեցինք Օրմանյանի ամփոփումը, իսկ ահա թե ինչ է գրում նույն հարցի վերաբերյալ պրոֆեսոր **Բ. Հարությունյանը**. «Նա (Գրիգորիսը - Հ.Կ.) ընդամենը 15 տարեկան էր, երբ Տրդատ III-ի գահակալության վերջում ուղարկվեց քարոզելու Հայոց Արևելից կողմեր, Վիրք և Աղվանք կամ Մասքթաց թագավորություն: Մինչ այդ որևէ փաստ չկա, որ վկայի Վրաց և Աղվանից եպիսկոպոսությունների մասին: Այլեհի, Գրիգորիսը սպանվեց մասքթաց թագավոր Մանեսանի հրամանով և քրիստոնեությունը Վիրքում և Աղվանքում արմատավորելու փորձը ժամանակավորապես անհաջողություն կրեց» (**Հարությունյան Բ.**, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում, **ՊԲՀ**, 2000, N 2, էջ 125-126):

Առավել նոր հրապարակված ուսումնասիրություններից հետաքրքրական է համարվում «Եվրոպա և Կովկաս. տարածաշրջանային հարաբերությունները և ինքնության հարցը» թեմայով տեղի ունեցած խորհրդածողովի նյութերի ժողովածուում տպագրված **Իրմա Կարաուլաշվիլու** «Առաջին քրիստոնեա թագավորի ինքնության բնութագիրը ու նրա անտիկ շրջանի և վաղ միջնադարի սիրիական, հունական, հայկական և վրացական բանավոր գրույցներում» հոդվածը (**Irma Karaulashvili, Les caractéristiques de l'identité du premier roi chrétien dans les narrations syriaques, grecques, arméniennes et géorgiennes de l'Antiquité tardive et du début du Moyen Age, Actes du colloque "L'Europe et le Caucase. Les relations interrégionales et la question de l'identité"**; Tbilissi, 2012, p. 56-109):

Պետք է խստովանել, որ այս հրապարակման անդրադառնում ենք ինչ-որ առումով հարկադրաբար, քանզի հեղինակը թեև համարվում է վրաց ժամանակակից պատմագիտու-
թյան աչքի ընկնող ներկայացուցիչ, բայց իր հողվածում կրկին շոշափում է մի թեմա, որը դեռևս
տասնամյակներ առաջ էին վրաց պատմաբանները փորձում ամրապնդել նյութին վերաբերող
պատմագրության մեջ, սակայն խիստ առարկությունների են հանդիպել հատկապես հայ
հեղինակների կողմից: Խոսքը Վրաց դարձի, այսպես կոչված, Բակուրյան տարբերակի մասին
է, որտեղ պատմվում է իբերական Միրիան (Միրիան) թագավորի և մի գերի քրիստոնյա կնոջ
մասին, որոնց ջանքերով էլ երկիրը քրիստոնեացվել է: Այդ ավանդագրույցն իբր Յրուսաղեմում
պատմել է Բակուր իշխանը, որը նախ գրի է առել Գեղասիոս Կեսարացին, ապա իրար են

վորդների պատմությունը, այլև ըստ էության մեղանշում է պատմական ճշմարտության դեմ ընդհանրապես: Այդ իսկ պատճառով բնավ ավելորդ չէ վերահաստատելը, որ՝

ա) Քարթլի քրիստոնեությունը մուտք է գործել Մեծ Հայքից, Գրիգոր Լուսավորչի կողմից ուղարկված կույս Նունեի առաքելությամբ,

բ) առաջին եպիսկոպոսությունը հիմնել և առաջին եպիսկոպոսին նշանակել է Գրիգոր Լուսավորիչը,

գ) Քարթլիի (Վիրքի) եկեղեցու հիմքերն ամրապնդել են Մեսրոպ Մաշտոցը և Շուշանիկ Մամիկոնյանը,

դ) Քարթլիի (Վիրքի) եկեղեցու կաթողիկոսները օծվել են Մեծ Հայքում,

ե) հիշյալ դարերում Քարթլիում հայկական ներկայությունը չափազանց թանձր, լիարժեք քաղաքական-մշակութային-կրոնական ներկայություն էր, ոչ թե հարևանական ազդեցություն:

Եվ այս ամենը ճշմարիտ է, որովհետև «հայերի ու վրացիների միաբանություն կար միմեանց հետ, և ամենքն էլ սուրբ Գրիգորի թեմն [էին] և միաբան Երուսաղեմի հաւատին»⁸⁷: Երկու ժողովուրդների միաբանությանը նվիրված յուրօրինակ այս ձոնը այսօր էլ կարող է բանալի հանդիսանալ դարավոր դրացիությունը շարունակելու համար: Ընդ որում աներկբա է, որ հատկապես երկու ժողովուրդների գիտական ու մշակութային գործիչներն են ի վիճակի պահպանելու բարի ավանդույթներն ու առավել

փոխանցել հույն և լատին եկեղեցական պատմագիրներ Ռուփինուսը, Մոկրաս Արդաստիկուսը, Եվսեբիոսիս Կեսարացին, Մոդոմեն (տե՛ս վերը): Վրացիների համար վարկածի գրավչությունը նրանում է, որ այն, ըստ իրենց, կապ չունի հայոց հետ: Այս կապակցությամբ Ներսես Աղիյանը դեռևս 65 տարի առաջ է գրել, որ Գերի կնոջ պատմությունը «հաղորդած են մեզի Գեղասիսու և Ռուփինուս իբրև պատմություն Վրաց դարձի. վասն զի պատմողն եղած է Վրաց թագաւորական տոհմէ Բակուր իշխանը: Բայց սա որովհետև պատմութեան ընթացքին որ և է ակնարկութիւն, որ և է կէտ մատնացոյց չէ ըրած, թէ խօսքը Վրաց դարձի մասին է, մենք չենք կրնար հաւատ ընծայել, թէ Բակուր իբոք բուն Վրաստանի դարձը նկատի ունեցած ըլլայ: [...] Այժմ, երբ նոր քննութիւնները բերին զմեզ այն համոզումի, թէ Բակուրի հաղորդած տեղեկութիւնները «Հայոց» քրիստոնեութեան դարձի մասին են..., ուստի «Գերի Կինը» կը նոյնանայ Հռիփսիմէ տիկնոջ հետ, թագաւորը՝ Տրդատ Բ. Մեծի հետ և Լուսաւորիչը՝ Գրիգորի հետ, կը ստիպուինք յայտարարել, թէ «Վրաց դարձի» կամ Ս. Նունեի Վարքի շէնքը կը մնայ անհիմն, ուրիշ խօսքով՝ կախադանաւոր շէնք: Հայրենասիրությունը պէտք է տեղի տայ ճշմարիտ պատմասիրութեան: Հարկ է վերադառնալ հին աւանդութեան, որով սնած էին Հայոց և Վրաց Նախնիք մինչև Ժ. դար» (տե՛ս Աղիյանս Ե., Քրիստոնեութեան մուտքը Հայաստան և Վրաստան, Վիեննա, 1949, էջ 47-48 7 և 333-334):

Այն, ինչ «այելել» է Աղիյանը, ըստ էության վրացի հետազոտողների համար լուրջ խոչընդոտ է իրենց նպատակին հասնելու ճանապարհին: Եվ ահա Կարաուլաշվիլին կարծես թե գտել է այդ խոչընդոտը ոչ թե վերացնելու (դա հնարավոր չէ), այլ շրջանցելու միջոցը: Նա փորձում է վերհանել քրիստոնեությունը պետական կրոն ծանաչած երկրի տիրակալների կամ կառավարիչների մասին տարբեր աղբյուրներում պահպանված հիշողությունները և համակարգել դրանք: Ըստ այդմ Միքիանի մասին ավանդագրույցը Արգար թագավորի գրույցի տարբերակն է, որը իրերների կողմից մշակվել և տեղայնացվել է, ինչպես դա արվել է նաև քրիստոնեությունը ընդունած արևելյան բոլոր ժողովուրդների կողմից (իմիջիայոց, հայության այսրագայում այդ մոդելը չի կարող գործել, որովհետև ազգային մատենագրությունը պահպանել է թե՛ Օսրոյենեի թագավոր Արգարի և թե՛ Մեծ Հայքում քրիստոնեությունը պետական կրոն հռչակող Տրդատի ու Գրիգորի մասին գրույցները): Այս է հեղինակի նորամուծությունը, որն առաջարկվում է ընդունել իբրև պատմագիտական նոր մոտեցում: Նրա կարծիքով, քրիստոնեությունը պետական կրոն դարձնելը տվյալ երկրի քաղաքական կողմնորոշումն էր արտահայտում (տե՛ս Karaulasvili I., նշվ. աշխ., էջ 57), այդ իսկ պատճառով պետք է համարել, որ Վրաստանը միշտ միտված է եղել դեպի արևմուտք: Այսինքն՝ հեղինակը, օգտագործելով պատմական նյութը, արդի քաղաքական խնդիրներ է լուծում: Մյուս կարևորագույն խնդիրը վերջինիս համար «Վրաց դարձի» պատմությունը հայկական արմատներից կտրելու ևս մեկ փորձ կատարելն է (դա նշանակում է, որ վրացական վրացագիտության համար այս հիմնախնդիրը դեռևս լուծված չէ): Այնուամենայնիվ, նա չի հերքում, որ Նունե/Նիսնու եղել է Հռիփսիմյան կույսերի խմբում, ապա նոր է անցել Վիրք (տե՛ս Karaulasvili I., նշվ. աշխ., էջ 103):

87 Ուխտասնէս, էջ 173:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քարթ, թիվ 3 (43) հայխ-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

սերտացնելու հայ-վրացական բարեկամությունը: Ի վերջո, հիմնականում հայերն ու վրացիներն են քրիստոնեական կացույթ ու մշակույթ ստեղծել Արևելքում:

Summary

EVANGELIZATION OF VIRK Armenian side

Hamlet K. Davtyan

The article is devoted to the Christianity of Virk. In spite of the undeniable proofs that this significant event had happened parallel to the Christianity of Mets Hayk and by the efforts of Grigor Partev's delegates, planned studies are printed in the recent decades through which an attempt is made to review and comment on historical facts by modern events. Of course this is not the way by which it is necessary to go. The fact of the contribution of one nation's representatives to the national and cultural life of another nation deserves only deep respect.